2026, ՀՈՒՆԻՍ Բ, ԹԻՎ 12 (704)

Էջմիածին

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԹԵՐԹ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց կաթողիկոսն ընդունեց



Հունիսի 17-ին

«Save Armenia» կազմակերպության պատվիրակությանը

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոս ընդունեց «Save Armenia» կազմակերպության պատվիրակությանը՝ գլխավորությամբ գործադիր տնօրեն դոկտոր Փոլ Մյուրեյի:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի Արտաքին հարաբերությունների և արարողակարգի բաժնի տնօրեն Գերաշնորհ Տ. Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանը, ԱՄՆ Հայոց Արևելյան թեմի միջեկեղեցական հարաբերությունների տնօրեն և թեմական պատվիրակ Գերաշնորհ Տ. Վիգեն արքեպիսկոպոս Այքազյանը և Մայր Աթոռի Միջեկեղեցական բաժնի տնօրեն Հոգեշնորհ Տ. Գարեգին վարդապետ Համբարձումյանը:

Ողջունելով հյուրերի այցը Հայաստան և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ Վեհափառ Հայրապետն իր օրհնությունն ու գնահատանքը բերեց պատվիրակության անդամներին՝ մարդու իրավունքների պաշտպանության, կրոնական ազատության և ժողովուրդների միջև երկխոսության խթանման ուղղությամբ իրականացվող նախաձեռնությունների համար: Նորին Սրբությունը գոհունակությամբ անդրադարձավ կազմակերպության կողմից գործադրվող ջանքերին՝ ի նպաստ Հայաստանին և հայ ժողովրդին առնչվող հիմնահարցերի բարձրաձայնման և միջազգային հարթակներում դրանց պատշաճ ներկայացման ուղղությամբ՝ հատկապես մեր երկրի համար դժվարին այս ժամանակներում:

Հանդիպմանը Հայոց Հայրապետն անդրադարձ կատարեց Եկեղեցի-պետություն հարաբերությունների ներկա իրավիճակին, բռնի տեղահանված արցախահայության իրավունքների պաշտպանության, Ադրբեջանում ապօրինաբար պահվող հայ գերիների ազատ արձակման, ինչպես նաև Արցախի հայկական հոգևոր և մշակութային ժառանգության պահպանության խնդիրներին:

Խոսելով Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հոգևոր, կրթադաստիարակչական և ազգապահպան առաքելության մասին՝ Հայոց Հովվապետն ընդգծեց, որ Եկեղեցին իր ծառայությունն է իրականացնում՝ ի խնդիր հայորդիների հոգևոր կյանքի զորացման, ազգային միասնության ամրապնդման և հասարակական կյանքում հոգևոր-բարոյական արժեքների հաստատման:

Դոկտոր Փոլ Մյուրեյը շնորհակալություն հայտնեց Նորին Սրբությանը ընդունելության համար՝ ներկայացնելով պատվիրակության այցի նպատակը և վերահաստատելով կազմակերպության պատրաստակամությունը՝ զորակցելու Հայոց Եկեղեցուն ու հայ ժողովրդին և ըստ ամենայնի նպաստելու Հայաստանի առջև ծառացած մարտահրավերների հաղթահարմանը:

Ջրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց նաև տարածաշրջանում խաղաղության հաստատման գործընթացներին՝ ընդգծելով, որ տևական խաղաղությունը պետք է խարսխված լինի արդարության, ժողովուրդների իրավունքների հարգման և արժանապատիվ համակեցության սկզբունքների վրա:



գործում կրոնական համայնքների դերակատարությունը, ինչպես նաև միջկրոնական երկխոսության և մշակութային կապերի առավել զորացման անհրաժեշտությունը: Նշվեց, որ արդի մարտահրավերների պայմաններում հոգևոր-բարոյական արժեքների ամրապնդումը կարևոր պայման է մարդկության կյանքում կայուն խաղաղության հաստատման ու անվտանգ ապագայի կերտման համար:



Հունիսի 26-ին

ՀԲԸՄ ծրագրերին մասնակից սփյուռքահայ երիտասարդներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության (ՀԲԸՄ) Երևանի «Գլոբալ առաջնորդության» և «Բացահայտիր Հայաստանը» ծրագրերի մասնակից սփյուռքահայ երիտասարդներին՝ ուղեկցությամբ ՀԲԸՄ Հայաստանի նախագահ, ՀԲԸՄ Կենտրոնական վարչության անդամ տիար Վազգեն Յակուբյանի: Հանդիպմանը տիար Վազգեն Յակուբյանը Նորին Սրբությանը տեղեկություններ փոխանցեց իրականացվող ծրագրերի վերաբերյալ՝ ընդգծելով դրանց կարևորությունը սփյուռքահայ երիտասարդների ազգային ինքնագիտակցության, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և հայրենիքի հետ կապի ամրապնդման գործում:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, իր հայրական օրհնությունն ու պատգամը բերելով երիտասարդներին, գոհունակությամբ արձանագրեց, որ ՀԲԸՄ-ն իր աշխարհասփյուռ կառույցներով համախմբում է հայորդիներին, ազգապահպան իր առաքելության շրջանակում իրականացնում կրթական, մշակութային ու երիտասարդական բազմաբնույթ ծրագրեր՝ սերտորեն համագործակցելով նաև Հայոց Եկեղեցու հետ:

Վեհափառ Հայրապետը բարձր գնահատեց ՀԲԸՄ-ի կրթադաստիարակչական և հայրենաճանաչության ամենամյա նախաձեռնությունները, որոնց շնորհիվ սփյուռքահայ երիտասարդները հնարավորություն են ունենում ճանաչելու և բացահայտելու հայրենիքը՝ նրա պատմությունը, հոգևոր ու մշակութային ժառանգությունը, ինչպես նաև հաղորդ դառնալու հայրենի իրականությանը: Այս առնչությամբ Նորին Սրբությունը նկատեց, որ հայրենաճանաչությունը կարևոր պայման է ազգային ինքնության պահպանման և հայրենիքի հանդեպ սիրո ու պատասխանատվության գիտակցության զորացման համար:

Հայոց Հայրապետը վստահություն հայտնեց, որ Հայաստանում անցկացրած օրերն անջնջելի դրոշմ են թողնելու հայորդիների հոգում՝ զորացնելով նրանց ազգային ոգին ու գիտակցությունը և դառնալով ներշնչանքի աղբյուր՝ հայրենիքում ձեռք բերած գիտելիքներն ու փորձառությունը ծառայեցնելու իրենց համայնքների շենացմանն ու հայրենիքի բարօրությանը:

Հունիսի 24-ին

«Էսրա» միջազգային հիմնադրամի նախագահին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Էսրա» միջազգային հիմնադրամի նախագահ, Իմամ Հասան Ասքարիի անվան հոգևոր դպրոցի և համանուն բարձրագույն ուսումնական հաստատության ղեկավար Հոջաթ-ոլ-Էսլամ վա ալ-Մուսլիմին դոկտոր Մորթեզա Ջավադի Ամոլիին՝ ուղեկցությամբ Հայաստանի Հանրապետությունում Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Խալիլ Շիրղոլամիի:

Հանդիպմանն անդրադարձ կատարվեց հայ և իրանցի ժողովուրդների բարեկամական հարաբերություններին, որոնք խարսխված են փոխադարձ հարգանքի և պատմական հարուստ անցյալի վրա:

Ջրույցի ընթացքում կարևորությամբ ընդգծվեց ժողովուրդների միջև փոխըմբռնման և համագործակցության խորացման

Տեղի ունեցավ Գևորգյան հոգևոր ճեմարանի 2025–2026 թթ. ուսումնական տարվա փակումը





Հունիսի 30-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցավ Գևորգյան հոգևոր ճեմարանի՝ 2025–2026 թթ. ուսումնական տարվա փակման հանդիսությունը:

Միջոցառումն սկսվեց Տերունական աղոթքով, որից հետո հնչեցին ՀՀ և Գևորգյան հոգևոր ճեմարանի օրհներգերը: Այնուհետև ներկաներին ողջունեց Գևորգյան հոգևոր ճեմարանի և Սևանի Վազգենյան հոգևոր դպրանոցի տեսուչ Հոգեշնորհ Տ. Հուսիկ աբեղա Սմբատյանը:

Հայր Սուրբը, անդրադառնալով Գևորգյան հոգևոր ճեմարանի առաքելությանը, ընդգծեց, որ ավելի քան մեկուկես դար կրթօջախը եղել է հավատքի, գիտելիքի, ազգային ինքնագիտակցության, բարոյական արժեքների և եկեղեցական ավանդության պահպանման ու փոխանցման կարևոր օջախ: Հուսիկ աբեղան նշեց, որ արդի բարոյական, հոգևոր և արժեքային մարտահրավերների պայմաններում Եկեղեցին առավել, քան երբևէ, կարիք ունի կրթված, աղոթասեր, խոնարհ և անձնվեր սպասավորների, որոնք իրենց ծառայությամբ կզորացնեն հավատացյալներին և կյանքով կվկայեն Ավետարանը:

Գևորգյան հոգևոր ճեմարանի երգչախմբի կատարումներից հետո դասախոսների անունից ներկաներին խոսք ուղղեց բ. գ. դ., պրոֆ. Աշոտ Գալստյանը, իսկ ուսանողության անունից սրտի խոսք ասաց 6-րդ լսարանի սան բարեշնորհ Կարլեն սարկավագ Գասպարյանը:

Հանդիսության ընթացքում Հայոց Հայրապետը պարգևներ հանձնեց ուսման մեջ բարձր առաջադիմություն արձանագրած ուսանողներին:

Ցերեկույթն ամփոփվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրական պատգամով ու օրհնությամբ: Իր խոսքում Նորին Սրբությունն ընդգծեց, որ յուրաքանչյուր ուսումնական տարի կրթօջախի պատմության մեջ արձանագրվող հաջողության մի նոր էջ է, որը նոր հույսերով ու սպասումներով է համակում ամենքին. «Հոգևոր-կրթական նվիրական հաստատությանց հարկի ներքո են պատրաստվում Հայոց Եկեղեցու հոգևոր սպասավորները, որոնք ծառայության են կոչվում Հայաստանի և Սփյուռքի մեր թեմերում՝ հոգատարելու ազգային ու մշակութային տարբեր միջավայրերում ապրող մեր ժողովրդի զավակներին, զորացնելու նրանց մեջ սերն առ հայրենին ու Սուրբ Եկեղեցին և առաջնորդելու Աստվածապարգև փրկության ճանապարհով: Ճեմարանի գործունեությունն ուղղակիորեն առնչվում է յուրաքանչյուր հայորդու հոգևոր կյանքին և ազգային ինքնագիտակցությանը, մեր հավատացյալների արժեքային համակարգին: Այս իմաստով Մեր ակնկալիքներն ու պահանջները միշտ մեծ են մեր հոգևոր հաստատություններից»:

«Արդի աշխարհի գերարագ փոփոխությունների պայմաններում խիստ անհրաժեշտ է, որ հոգևորականը, ամուր կառչած մեր հայրերի սրբազան ավանդությանն ու ազգային արմատներին, հաղորդ լինի նաև ժամանակի զարգացումներին ու մարտահրավերներին և համարժեքորեն արձագանքի իր հոտի հոգևոր կարիքներին ու պահանջներին»,– նշեց Հայոց Հայրապետը՝ հավելելով, որ միայն այս ճանապարհով է հնարավոր ներկա հրամայականների պայմաններում արդյունավորել Սուրբ Եկեղեցու տիրավանդ առաքելությունը և Կենաց Խոսքի քարոզչությամբ լուսավորել և բարեզարդել հայ կյանքը:

Ապա, դիմելով դասախոսներին, Ամենայն Հայոց Կաթողիկոսը հորդորեց՝ հավատարիմ սահակ-մեսրոպյան դպրոցի ավանդներին՝ շարունակել ջանադիր ու բեղուն աշխատանքով գիտելիքներ հաղորդել սաներին, զորացնել նրանց հոգևոր նկարագրով, ազգային գիտակցությամբ, ոգեշնչել մեր մեծանուն հոգևոր գործիչների լուսավոր օրինակներով. «Ազգային-եկեղեցական անդաստանին նոր կորովի մշակներ հասցրեք և մեր Տեր Հիսուս Քրիստոսի նման «քաջ հովիվներ», որպեսզի նրանք կարող լինեն Ավետարանի խոսքով ոգեշնչելու, մխիթարելու և օգտաշատ սպասավորություն բերելու մեր ժողովրդի զավակներին»:

Նորին Սրբությունը ճեմարանի սաներին պատգամեց անհագորեն ամբարել մատուցվող գիտելիքները, աղոթքով ու նախանձախնդրությամբ պատրաստվել Քրիստոսի սպասավոր լինելու մեծագույն կոչմանը: Վեհափառ Հայրապետը նաև ընդգծեց, որ սպասավորությունը ազգին և եկեղեցուն պահանջում է քաջարի ոգի, աննկուն կամք և ի հարկին՝ ամենայն զոհողությանց պատրաստակամություն:

«Հոգևոր ասպարեզ մուտք գործելու ձեր հանձնառության մեջ ամուր մնացեք հավատքով և աներեր՝ մեր Փրկչի ճշմարիտ վարդապետությանն ու կենարար պատգամներին հավատարմության մեջ: «Ով բնակվում է Իմ մեջ, և Ես՝ նրա մեջ, նա շատ պտուղ է տալիս, որովհետև առանց Ինձ ոչինչ անել չեք կարող»,– ասում է Տերը (Հովհ. 15.5): Առաջնորդվեք տերունի այս պատգամով և ազգային կյանքում Հայոց Եկեղեցու առաքելության կենսական կարևորության գիտակցությամբ, որպեսզի իբրև ապագա առաջնորդներ ու հովիվներ՝ արժանավոր հաջորդները լինեք մեր սուրբ նախնյաց և ձեր ծառայությամբ լույսն ու սերը առատացնեք մեր ժողովրդի զավակների հոգիներում: Բարձրյալը ձեզ շնորհ է տվել՝ ձեր հավատը, գիտելիքները, նվիրումը և ողջ կյանքը ծառայեցնելու և ընծայաբերելու ի սեր Աստծո, ի սեր մեր Սուրբ Եկեղեցու և ազգի»,– ասաց Հայոց Հայրապետը:

Ամավերջյան փակման հանդիսության առիթով Նորին Սրբությունն իր օրհնությունն ու գնահատանքը բերեց Գևորգյան հոգևոր ճեմարանի տեսչական և դասախոսական կազմին՝ գլխավորությամբ Հոգեշնորհ Տ. Հուսիկ աբեղա Սմբատյանի:

Վերջում Գարեգին Երկրորդ Հայրապետն աղոթք բարձրացրեց առ Աստված, որ Տերը պահի ու պահպանի ամենքին Իր ամենախնամ Սուրբ Աջի հովանու ներքո, և Աստծո զորակցությամբ նորանոր հաջողություններով զարդարվի Մայր Աթոռի հոգևոր կրթարանների կարևոր գործունեությունը՝ ի փառս Աստծո, հանուն ազգի և հայրենիքի բարօրության ու առաջընթացի և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու պայծառության:


2025–2026 ուսումնական տարում ճեմարանն ավարտեց 11 սան:

Նոր նշանակումներ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ կատարվել են եկեղեցականների նոր նշանակումներ: Արժանապատիվ Տ. Անանիա քահանա Անտոնյանը ծառայության է կոչվել Ուկրաինայի հայոց թեմում: Արժանապատիվ Տ. Վահան քահանա Զաքարյանը ծառայության է նշանակվել Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմում: Արժանապատիվ Տ. Աբրահամ քահանա Հարությունյանը ծառայության է կոչվել Տավուշի թեմում: Արժանապատիվ Տ. Մուշեղ քահանա Ավագյանը ծառայության է նշանակվել Արգենտինայի հայոց թեմում:

Լրատվական նյութերը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տեղեկատվական համակարգի

Աստված կանչում է Աբրահամին



Ռեմբրանդտ վան Ռեյն, Աբրահամ և Իսահակ, 1635 թ.

«Աստված ասաց Աբրահամին. «Ելի՛ր դու քո երկրից, քո ազգականներից ու քո հոր տնից և գնա՛ այն երկիրը, որ ցույց կտամ քեզ»»

(Ծննդ. 12:1):

Նախաբան

Իսրայելի նախահայրերի և հրեա ազգի ձևավորման մասին պատմություններն սկսվում են 11-րդ գլխի վերջին հատվածից և զբաղեցնում են Ծննդոց գրքի հիմնական մասը: Սերնդաբանական շարքն սկիզբ է առնում Ադամից, շարունակվում մինչև Նոյ և նրա որդիներից Սեմի ու հաջորդների միջոցով հասնում է Թարային՝ Աբրահամի հորը: Նախահայրերին վերաբերող իրադարձությունները, անշուշտ, իրենց բնույթով պատմական են, քանի որ դրանք արտացոլում են նահապետների ազգային և աշխարհագրական կապերը, նրանց կրոնական ու բարոյական կյանքը, ինչպես նաև հասարակական շրջակա պայմանները:

Հրեական շաբաթական ընթերցումների շարքում Աբրահամի պատմությունը ներառված է երեք հիմնական խմբերում՝ Լեխ լեխա (12:1–17:27), Վայեռա (18:1–22:4), Խաեյ Սառա (23:1–25:18): Հետաքրքրական է այն հանգամանքը, որ Սուրբ Գիրքն Աբրահամի ասպարեզ իջնելը ներկայացնում է բաբելոնյան չհաջողված աշտարակաշինության համատեքստում: Իսկ թե ո՛րն էր վերջինիս նպատակը, ընթերցողին հայտնի է դառնում Ծննդոց 11:4 համարից. «Եկեք մեզ համար մի քաղաք կառուցենք և մի աշտարակ, որի գագաթը հասնի մինչև երկինք, և մեզ համար անուն ստեղծենք *ողջ երկրի վրա սփռվելուց առաջ*»: Ընդգծված արտահայտությունը եբրայական բնագրում այլ կերպ է՝ «որպեսզի չսփռվենք», այսինքն՝ մարդիկ նախևառաջ վախենում էին երկրի վրա տարածվելուց, այդ իսկ պատճառով ցանկանում են միավորվել մեկ հստակ նպատակի համար: Որոշ միդրաշների համաձայն՝ աշտարակաշինության նախաձեռնողը Քամի սերնդից Նեբրովթն էր, որ հիշատակվում է Սուրբ Գրքում իբրև «հսկա որսորդ՝ Աստծու առաջ» (Ծննդ. 10:9): Վերջինիս անունը թարգմանաբար նշանակում է «եկեք վեր կենանք», ասել է թե՝ «եկեք ապստամբենք»:

Իսկ ինչո՞վ էր պայմանավորված տարածվելու կամ սփռվելու հանդեպ մարդկանց վախը: Պատճառն այն է, որ այս սերունդը կարծում էր, թե երկրի վրա իրենց բազմանալով և տարածվելով՝ ջրհեղեղը կարող է կրկնվել: Հիշենք, որ Նոյի և ջրհեղեղի մասին պատմությունն սկսվում էր հենց այս բառերով. «Երբ մարդիկ սկսեցին բազմանալ....» (Ծննդ. 6:1): Բնականաբար, ամենքն էլ քաջ գիտակցում էին, որ երկինք հասնել հնարավոր չէ. հետևաբար հարց է առաջանում, թե ո՛րն էր այս դեպքում նրանց վերջնակետը: Միդրաշական ավանդության որոշ մեկնաբանությունների համաձայն՝ Նեբրովթը ցանկանում էր հեռացնել մարդկանց Աստծուց և դարձնել մարդկությանն ինքնաբավ: Մարդիկ կմոռանային և հետագայում նույնիսկ չէին էլ իմանա Աստծո գոյության մասին՝ այդ կերպ դադարելով այլևս պատասխանատու լինել Տիրոջ՝ իրենց տված օրենքների խախտման համար, իսկ օրենքի չիմացությունը նրանց կազատեր հետագա պատժից: Այս կերպ աշտարակը կդառնար սահման երկրի և երկնքի միջև, մարդիկ կունենային ինքնակառավարում, իսկ Աստված կիշխեր միայն իր «տարածքում»՝ երկնքում. ահա «աշտարակաշինության» բուն նպատակը: Ի վերջո, սակայն, մարդկությունն ստացավ այն, ինչից վախենում էր. «Տերը՝ Աստված, այնտեղ խառնեց ամբողջ երկրի բնակիչների լեզուները և այնտեղից նրանց *սփռեց* ողջ աշխարհով» (Ծննդ. 11:9): Աստված մարդկանց սփռեց ոչ թե նրանց միավորումը կանխելու նպատակով, այլ որովհետև նրանց համատեղ ջանքերը միտված էին դեպի կործանարար չարիքը: Աստված դեմ է չար նպատակներով միասնությանը, և Աբրահամի կանչն այս դեպքում դառնում է նոր՝ Աստծո շուրջ կառուցվող միասնության սկիզբ:

Թարայի սերունդը

11-րդ գլխի վերջաբանում Սուրբ Գիրքը մեզ է ներկայացնում Թարայի սերնդաբանությունը: ➥ *էջ 8*

Յակոբ Պատրիարք Նալեան. ***Բարեգործութեան երեք տեսակներու մասին, այսինքն՝ ողորմութեան, պահքի եւ աղօթքի***

Ողորմութեան մասին

Ողորմութիւնը սիրտի գթութիւնն է անոնց հանդէպ, որոնց կ՚ողորմիս: Որովհետեւ, ով որ քարասիրտ է, չի՛ գթար ողորմութեան կարիք ունեցողներուն: Այդպիսին Աստուծոյ տուրքը Աստուծմէ կը խնայէ եւ Աստուծոյ նմանելու փոխարէն անասուն կ՚ըլլայ, որովհետեւ Քրիստոս ըսաւ, թէ՝ գթած եղէք, ինչպէս ձեր Երկնաւոր Հայրը գթած է [Ղուկ. 6.36]: Իսկ անգութ մարդը շունի նման է, որ նոյնիսկ եթէ իր կերածէն աւելնայ, չի տար ուրիշներուն: Սակայն եթէ թեթեւ աչքով ու միտքով նայինք, ապա բոլոր ստեղծուածներէն իսկ ողորմութիւն կը սորվինք:

Նախ՝ Աստուծմէ ետք մեզի գթութիւն կը սորվեցնեն հրեշտակներուն դասերը, որոնց վերնայիններն Աստուծմէ ընդունած շնորհքը միշտ կը հաղորդեն ստորագոյն հրեշտակներուն, իսկ ստորագոյնները մեզի կը հաղորդեն: Որովհետեւ բարիին խափանումն ու չարի պատճառը կը մերժեն մեր մէջ: Ինչպէս Աստուած ըսաւ, Ես Իմ հրեշտակս ղրկեցի քու առջեւդ, եւ ան պիտի վանէ ազգերն ու թշնամիները [տես Ելք 23.20, 27]: Փորձութիւնները կը թեթևցնեն, ինչպէս հրեշտակը, որ հնոցին մէջ իջաւ եւ կրակը ցօղի փոխարկեց [Դան. 3.49–50]: Թշնամիներու դէմ կ՚օգնեն, ինչպէս հրեշտակը ասորիներէն 185 000 հոգի սպաննեց [Ես. 37.36]: Մեր աղօթքը Աստուծոյ կը նուիրեն, ինչպէս Տոբիթի եւ Կոռնելիոսի աղօթքները [Տոբիթ 3.1–6, 24–25: Գործք 10.1–8]: Գործի [աշխատանքի] կը վարժեցնեն, ինչպէս Գաբրիէլը խելամուտ ըրաւ Դանիէլ մարգարէն ու Զաքարիա Քահանայապետը [Դան. 8.15–19, 9.20–22: Ղուկ. 1.8–20]: Մեղք գործելէ կ՚արգիլեն, ինչպէս Ղովտը Սոդոմէն հանեցին [Ծննդ. 19.12–22]: Կը զօրացնեն ու կը կերակրեն, ինչպէս հրեշտակը եղիա մարգարէն արթնցուց՝ ուտելու համար իր բերած կերակուրը [Գ. Թագ. 19.3–8]: Կը մխիթարեն, ինչպէս Ռաֆայէլ հրեշտակը Տոբիթին ըսաւ, թէ՝ քաջալերուէ, խաղաղութիւն թող ըլլայ քեզի [Տոբիթ 12.14–20]. երկու հրեշտակներ ալ Քրիստոսի համբառնալուն ժամանակ առաքեալները մխիթարեցին [Գործք 1.9–11]: Երկիւղը կը փարատեն, ինչպէս Գաբրիէլ ըսաւ Աստուածածինին, թէ՝ մի՛ վախնար, Մարիամ [Ղուկ. 1.30]: Բանտարկուածները կ՚արձակեն, ինչպէս հրեշտակը Սուրբ Պետրոսն ու ուրիշ առաքեալներ արձակեց [Գործք 5.17–20, 12.6–12]: Բարձրագոյն բաները կ՚աւետեն մեզի, ինչպէս Գաբրիէլը Քրիստոսի ծնունդը [Ղուկ. 1.26–38]: Գաղտնի բաները կը յայտնեն, ինչպէս հրեշտակը Աստուածահայր Յովսէփին Աստուածածինի մասին յայտնեց, թէ անորմէ ծնածը Սուրբ Հոգիէն է [Մատթ. 1.19–20]: Կը պահեն [պահպանեն] մեզ, ինչպէս Դաւիթ կ՚ըսէ, Իր հրեշտակներուն պատուիրած է Քեզի համար, որպէսզի պահեն Քեզ [Սաղմ. 90.11–12: Մատթ. 4.6]:

Արդարև, անհրաժեշտ են հոգիներ, որոնք սպասաւորելու ղրկուին փրկութիւն ժառանգողներուն: Տակաւին բազմաթիւ գործեր կան հրեշտակներուն, որ բոլորն ալ ցոյց կու տան ողորմութեան գործը:

Երկրորդ՝ ողորմութիւն կը սորվինք երկինքէն եւ բոլոր աստղերէն, որոնք իրենց ազդեցութիւնն ու յատկութիւնը միշտ դէպի վար կը հոսեցնեն [դէպի երկիր]. արեգակն ալ իր լոյսը կու տայ բոլոր աստղերուն. ամպերը անձրև կու տան, ինչ բանը արեգակին ջերմութիւնը կը բարեխառնէ. ծովը կը շարժի ու չի հոտիր, եւ ձուկերն ալ ողջ կը մնան:

Երրորդ՝ ողորմութիւն կը սորվինք նաեւ թռչուններէն, որովհետեւ Նոյի տապանին մէջի աղաւնին ձիթենիի շիւղ բերաւ ի օրինակ ողորմութեան [Ծննդ. 8.11]: Ագռաւը եղիա մարգարէին կը կերակրէր [Գ. Թագ. 17.4–6]: Մեղուն իր քաղցր մեղրը կու տայ ի վայելչութիւն մարդուն, իսկ քաղցրախօս թռչուններն ալ կը զուարճացնեն մեր լսելիները:

Չորրորդ՝ ողորմութիւն կը սորվինք ոչխարներէն, որովհետեւ եթէ անոնցմէ մէկը հիւանդանայ, առողջները կու գան եւ արևին դէմը կը կանգնին՝ շուք ընելով հիւանդ ոչխարին: Դարձեալ՝ [ողորմութիւն] կը սորվինք ձիէն, որ սատկած ձիու մը քուռակը ուրիշ ձի մը կը սնուցէ, ինչպէս նաեւ մոլորած մարդ կը ճանապարհորդէ, պզտիկներուն եւ կիներուն գութ կը ցուցաբերէ:

Դարձեալ՝ ողորմութիւն կը սորվինք Սուրբ Գիրքէն, որ կը յորդորէ ամէն տեղ ողորմութիւն գործել: Քրիստոս կ՚ըսէ. երանի՛ ողորմածներուն [Մատթ. 5.7]. դարձեալ կ՚ըսէ. մամոնան գործածեցէք [ողորմութիւն ըրէք]՝ շահելու Աստուծոյ բարեկամութիւնը [տես Ղուկ. 16.9]. դարձեալ՝ արժանապէս ողորմութիւն տուէք [տես Ղուկ. 11.41]. դարձեալ՝ ով որ կը խնդրէ քեզմէ, տո՛ւր անոր [Մատթ. 5.42]: Տակաւին [Քրիստոս] չխնայեց Իր մարմինն ու արիւնը, Իր հագուստը [պատմուճանը] [Յովհ. 19.23–24], կողին ջուրը [Յովհ. 19.33–34]. աւելին, Ան Իր մայրն ալ Յովհաննէս աւետարանիչին տուաւ մայրութեան համար [Յովհ. 19.25–27], իսկ Իր հոգին մեր հոգիին համար որպէս գին տուաւ: Նաեւ աչքերով ողորմեցաւ՝ Ղազարոսի համար լալով, ձայնով՝ կանչելով զինք, սիրտով՝ գթալով [Յովհ. 11.32–44]: Ձեռքերով՝ հացը բազմացնելով [Մատթ. 14.13–21], եւ կաւ ծեփելով՝ կոյրին աչքին դնելով [Յովհ. 9.1–12]: Բերանով՝ վարդապետելով: Ականջով՝ հիւանդներուն ձայնը լսելով: Ոտքերով՝ յոգնելով: Գլուխով՝ փուշով պսակուելով [Մարկ. 15.17]: Մահուամբ՝ փրկելով հոգիները դժոխքէն: Յարութեամբ՝ տրտմածները մխիթարելով: Համբառնալով՝ Սուրբ Հոգին ղրկելով: Երկրորդ գալուստով՝ պիտի ողորմի սուրբերուն իրենց արժանիքէն աւելի [վեր] փառաւորելով զանոնք, իսկ մեղաւորներուն՝ իրենց արժանիքէն քիչ [վար] պատժելով:

Դարձեալ՝ Աստուծոյ սուրբերը մեզի օրինակ են եւ ողորմութեան կը յորդորեն, ինչպէս Աբրահամը, որ առանց հիւրի՝ հաց չէր ուտեր եւ արժանի եղաւ իր վրանին մէջ հիւրընկալելու Աստուծոյ Խօսքը [Ծննդ. 18.1–5], ինչպէս նաեւ իր եղբօրորդին՝ Ղովտը գերութենէն վերադարձուց [Ծննդ. 14.12–16]: Ղովտը Աստուծոյ հրեշտակները կերակրեց [Ծննդ. 19.1–3]: Մովսէս մարգարէն այնքան ողորմած էր, որ երբ Աստուած կամենար հրեաները պատժել, կ՚ըսէր Անոր, թէ ներէ՛ ասոնց մեղքերը, այլապէս՝ ջնջէ՛ զիս կեանքի գիրքէն [Ելք 32.30–32]: Յեսուս՝ Նաւէի որդին, Ռախաբ պոռնիկին ողորմեցաւ եւ ազատեց զայն սպանութենէ [Յեսու 6.20–23]: Սուրբ Պետրոսն ու Սուրբ Յովհաննէսը անդամալոյծը բժշկեցին [Գործք 3.1–10]: Պետրոսը Տաբիթային յարուցեց [Գործք 9.36–43]: Պօղոս առաքեալ Եւտիքոս պատանին կենդանացուց [Գործք 20.7–12]: Սուրբ Մարկոս եւ Սուրբ Սրապիոն մեծ ճգնաւորները Սուրբ Աւետարանն իսկ ծախեցին եւ ողորմութիւն տուին: Մեր Սուրբ Գրիգոր Լուսաւորիչը տասներկու չարչարանքներ քաշեց՝ ողորմելով մեր ազգին եւ դարձուց մեզ կռապաշտութենէ:

Տակաւին բազմաթիւ օրինակներ ու վկայութիւններ կան աստուածային գիրքերուն մէջ, եւ Աստուածաշունչին մէջ թուղթ մը չկայ, որու մէջ ողորմութեան մասին օրինակ մը չգտնուի: Իսկ այս գովելի ողորմութիւնը երկու կերպ է՝ հոգևոր եւ մարմնաւոր:

Հոգևոր ողորմութիւնը ասոնք են.

Նախ՝ սիրտի ցաւակցութիւնը տկարներուն հանդէպ:


Երկրորդ՝ ներել ուրիշներուն յանցանքը:

Երրորդ՝ յանդիմանել մեղուցեալները:

➥ էջ 6

Բաբելոնի աշտարակը և հարակից հարցեր

Բաբելոնի աշտարակի մասին աստվածաշնչյան պատմությունը, որ զետեղված է Ծննդոց գրքի 11-րդ գլխում, ներկայացնում է տարբեր լեզուների և մշակույթների առաջացումն ու զանազանումը: Ավանդության համաձայն՝ մարդկային միասնական ցեղը, որ խոսում էր մեկ լեզվով, գաղթում է Սենաար երկիր (Ստորին Միջագետք), որտեղ նրանք համաձայնում են կառուցել բարձր, մինչև երկինք հասնող աշտարակով մեծ քաղաք: Յահվեն, նկատելով մարդկության միասնության ուժը և տիտանական ջանքերը, նրանց խոսքը խառնում է այնպես, որ այլևս չեն կարողանում հասկանալ միմյանց, և ցրում է նրանց աշխարհով մեկ՝ անավարտ թողնելով քաղաքի կառուցումը:



Գուստավ Դորե. Լեզուների խառնաշփոթը, փորագրություն, 1865 թ.

Բաբելոնյան աշտարակի պատմական համատեքստը (շումերական, ասորեստանյան, հունա-հռոմեական առասպելաբանություն): Ժամանակակից գիտնականներից ոմանք Բաբելոնի աշտարակի պատմությունը կապում են հայտնի՝ մասնավորապես հիմնիջագետքյան ասքերում եղած պատմական կառույցների և առասպելների հետ: Առավել տարածում գտած նմանատիպ կառույցի օրինակ է համարվում Էտեմենանկին (շումերերեն՝ «երկրի և երկնքի հիմնադրի տաճար», 91 մ)՝ Բաբելոնում Մարդուկ աստծուն նվիրված զիկկուրատը, որը եբրայերեն կոչվում էր *Բաբելոն*: Բանահյուսական հնագույն այս պատմությունն առկա է նաև հին շումերական լեգենդում՝ «Էնմերկարը և Արատտայի տերը», որը նկարագրում է հարավային Միջագետքի իրադարձություններն ու տեղանքները:

Շումերական Էտեմենանկի զիկկուրատը վերակառուցվել է Ք. ա. 6-րդ դարում նեոբաբելոնյան կառավարիչներ Նաբոպալասարի և Նաբուգոդոնոսոր II-ի կողմից, սակայն Ալեքսանդր Մակեդոնացու նվաճումների ժամանակ արդեն խարխլվել էր: Վերջինս կարողացել է աշտարակի սալիկները տեղափոխել մեկ այլ վայր, սակայն նրա մահը կանգնեցրել է վերակառուցումը, և այն քանդվել է նրա հաջորդ Անտիոքոս Սոտերի օրոք: Հույն պատմաբան Հերոդոտոսը (Ք. ա. մոտ 484–425 թթ.) իր «Պատմություններ» աշխատության մեջ գրել է այս զիկկուրատի մասին՝ անվանելով այն «Զևս Բելի տաճար»: Արդի շրջանի գիտնականների կարծիքով՝ Բաբելոնի աշտարակի մասին աստվածաշնչյան պատմությունը, հավանաբար, ազդված է Էտեմենանկի շուրջ առաջացած պատումներից: Ժամանակակից աստվածաշնչագիտության պրոֆեսոր Սթիվեն Լ. Հարրիսը կարծում է, որ առասպելական այդ պատմության ներմուծումը սուրբգրային բնագիր տեղի է ունեցել բաբելոնյան գերության ժամանակ (Ք. ա. 6-րդ դ.):

Բաբելոնի աշտարակի կառուցման մասին նմանատիպ պատմություններ կան շումերական Էնմերկարի և Արատտայի տիրակալի մասին առասպելում: Մարդկության առաջին խոշոր քաղաքակրթական կենտրոններից Ուրուկ քաղաքի (ներկայիս Իրաքի տարածքում) Էնմերկար թագավորը, որը նաև կիսաառասպելական հերոս է, էրիդուում կառուցում է հսկայական զիկկուրատ և բարձր մշակույթ ունեցող, լեռնային երկիր Արատտայից պահանջում է թանկարժեք նյութեղեն տուրք դրա կառուցման համար՝ արտասանելով մի կախարդական խոսք, որով շումերական պանթեոնի գլխավոր աստվածներից Էնկիին խնդրում է վերականգնել բնակեցված շրջանների լեզվական միասնությունը. «Ամբողջ տիեզերքը, լավ պահպանված ժողովուրդը, թող բոլորը միասին դիմեն Էնլիլին (շումերական աստվածների արքային.– Ն. Գ.) մեկ լեզվով»:

Նեոասորեստանյան ժամանակաշրջանում Նինվեում Աշուրբանիպալի (Ք. ա. 668–627) գրադարանից հայտնաբերվել է մասամբ ընթեռնելի մի բնագիր, որից ենթադրելի է, որ լեզվական խառնաշփոթի և աստվածային միջամտության մասին այս պատմությունները դեռևս արդիական էին այս ժամանակահատվածում: Սրա մասին է վկայում նաև նեոասորեստանյան աստվածային պատժի թեմայի առկայությունը թագավորական արձանագրություններում, ուր նկարագրվում են աստվածները, որոնք պատժում են ազգերին իրենց ամբարտավանության համար՝ մասնավորապես ոչնչացման, ցրման կամ խառնաշփոթի միջոցով: Այս թեման առկա է նաև Բաբելոնի աշտարակի սուրբգրային պատմության մեջ:

Նեոասորեստանյան Սենեքերիմ թագավորի (Ք. ա. 705–681 թթ.) տարեգրություններում նկարագրվում է, թե ինչպես են աստվածները «խառնել» իր թշնամիների ծրագրերը և ցրել նրանց ուժերը, ինչը հանգեցրել է իր հաղթանակին և Ք. ա. 689 թ. Բաբելոնի կործանմանը: Այս իրադարձությունները, հնարավոր է, բաբելոնյան գերության շրջանում ազդեցություն են ունեցել աստվածաշնչյան հեղինակների վրա, որոնք քաղաքի անկումը համարում էին աստվածային արարք՝ ամրապնդելով այն գաղափարը, որ հպարտությունն է հանգեցրել Բաբելոնի անկմանը:

Նույնանման մի առասպել՝ «Գիգանտոմախիա» անունով, կա նաև հունական դիցաբանության մեջ, որը մեծապես ազդված է հռոմեականից, և ըստ որի՝ հսկաներն ու օլիմպիական աստվածները պայքար էին մղում տիեզերքի գերիշխանության համար: Հռոմեացի ականավոր բանաստեղծ Օվիդիոսի (Ք. ա. 43 – Ք. հ. 17) կողմից վկայակոչված այս առասպելական պատմության մեջ հսկաները փորձում են հասնել երկնային աստվածներին՝ լեռները կույտելով, բայց Յուպիտերը նրանց հետ է մղում կայծակներով. «Հսկաները փորձել են գրավել երկնային թագավորությունը՝ լեռները կույտելով մինչև հեռավոր աստղերը: Այնուհետև աստվածների ամենակարող հայրը նետեց իր կայծակը, կոտրեց Օլիմպոսը և Օսայից ներքև նետեց Պելիոն լեռը» («Կերպարանափոխություններ», 1:151–155):

Բաբելոնի աշտարակի պատմության անդրադարձը ռաբբինական և հին հրեական գրականության մեջ: Ռաբբինական գրականությունը բազմաթիվ տարբեր պատմություններ է առաջարկում Բաբելոնի աշտարակի կառուցման պատճառների և այն կառուցողների մտադրությունների մասին:

➥ էջ 5, 7

Ճնորհ՝ առանց փրկության. Աստծո կամքը և մարդու երկմտանքը

Ինի Կտակարանում հեթանոսները որոշակի դերակատարություն ունեն փրկագործության պատմության մեջ: Հետաքրքիր է Բաղաամի կերպարը, բայց հիշենք, որ հեթանոսներ էին նաև Ռագուելը (Յոթոր)՝ Մովսեսի աները (Ելք. Բ 18, ԺԸ 1), Հռութը և Թամարը:

Բաղաամը հեթանոս գուշակ էր, ապրում էր Հյուսիսային Սիրիայում՝ Ասորիքում, ուներ որոշակի կարգավիճակ: Նա թագավորներին և իշխաններին հայտնում էր Աստծո կամքը և պարզաբանում այդ կամքից բխող հետևանքները, ինչպես նաև կարող էր Տիրոջ կողմից անեծքներ և օրհնություններ բաշխել: Նման մարգարեների վերաբերյալ տեղեկություններ հայտնի դարձան նաև պեղումների արդյունքում: Օրինակ՝ թագավորները 130 ցուլ են զոհաբերել ոմն մարգարեի, և այդ մասին մոտ 25 000 սալիկ կա: Ինչպես պատմում է Թվոց գիրքը, եգիպտոսից դուրս եկած և Պաղեստին մտած մովաբացիների թագավորը մարդ է ուղարկում՝ Բաղաամին համոզելու, որ նա այդ ազգի վրա անեծք կարդա: Սակայն Տերը, հայտնվելով Բաղաամին, ասում է, որ նրանք Տիրոջ ժողովուրդն են (հմմտ. Թվեր ԻԲ 12):

Բաղաամը իր գործն անում էր դրամով, և նա տարակուսում է, որ ճշմարիտ Աստված կարող է հայտնվել, և առանց պարգևատրության և առանց պատժի՝ ինքը կարող է գուշակություն անել: Տերը խիստ բարկանում է, քանի որ Բաղաամը երեք անգամ լսում է Տիրոջ ձայնը և ոչ մի անգամ ուշադրություն չի դարձնում, որովհետև մտածում է, որ հերթական դևերից կամ կուռքերից մեկն է, որ իրեն խորհուրդ է տալիս, և ինքը փորձում է մեկ ուրիշ կուռքի կամքը (իրականության մեջ այսպես էր. մի աստծո մոտ գնում էին՝ գուշակության, եթե դա բավական չէր, փորձում էին այնքան, մինչև որոշակի արդյունքի էին հասնում):

Այսպիսով՝ Տերը զայրանում է, որ Բաղաամը չի ընկալում իրեն՝ իբրև ճշմարիտ Աստուծու. լսում է Իր ձայնը, բայց չի հասկանում:

Բաղաամի էշի պատկերը, որ շատերին թվում է հեքիաթ, իրականում սուրբգրային հեգնանք է, հոգևոր ծաղրապատկեր, որովհետև անգամ Բաղաամի էշը տեսնում է հրեշտակին, իսկ Բաղաամը՝ ոչ: Այսինքն՝ Բաղաամն իջել էր անասնական մակարդակից էլ ցածր: Այս դրվագով հասկանում ենք, որ մարդն իր կամակորության պատճառով կարող է իջնել ցածրագույն մակարդակի՝ չհասկանալով կամ չընդունելով աստվածային ձայնը: Բաղաամն այստեղ խորհրդանշական կերպար է: Սուրբ Գրքում ընդամենը երկու դրվագ կա, երբ խոսում է կենդանին. առաջինը՝ Ծննդոց գրքում, երբ օձն է խոսում (Ծննդ. Գ 1–5), և երկրորդը՝ Բաղաամի էշը (Թվեր ԻԲ 21–35):

Այս պատմության մեջ տեսնում ենք չորս մարգարեություն, ընդ որում՝ վերջին մարգարեությունը մեսիական է: Բաղաամն ասում է երեք մարգարեական բան, որոնք պիտի տեղի ունենան. «Ծագելու է Հակոբի աստղը, մի մարդ է բարձրանալու Իսրայելից և հարվածելու է Մովաբի իշխաններին, գերեվարելու է Սեթի բոլոր հետնորդներին: Նա պիտի ժառանգի Եդովմը, որ պատկանում է իր թշնամի Եսավին: Եվ դա Իսրայելն անելու է զորությամբ» (Թվեր ԻԴ 17–18): Այս հատվածն այլ կերպ շարադրված է մի շարք մարգարեական գրքերում, ուր խոսվում է ծագող աստղի մասին, որը խորհրդանշում է Հիսուս Քրիստոսին. «Նրա թագավորն Ագագից ավելի կբարձրանա, և նրա թագավորությունը կբարգավաճի» (Թվեր ԻԴ 7): Եզեկիելի և Երեմիայի մարգարեության մեջ Գոգը և Մագոգը կասպյան այն թագավորություններն էին, որ հրեաների համար աներևակայելի հեռավորության վրա էին և համարվում էին առասպելական թագավորություններ (տես Եզեկ. ԼԸ, ԼԹ): Դրանք սովորաբար համեմատվում են Հյուսիսի սկյութական ցեղերի հետ, որոնք այն ժամանակ արդեն ասպատակել էին Ուրարտուն՝ հասնելով մինչև Պաղեստին: Այստեղ խոսքն այն մասին է, որ նույնիսկ գալիք թագավորությունն այս երկու հզոր թագավորություններից ավելի զորավոր պիտի լինի՝ տարածվելով ամբողջ աշխարհի վրա:

Այսպես է սկսվում այն գործողությունների շղթան, որ ծագեց Իսրայելի դեմ Մովաբի և Մադիանի դաշինքից: Ցանկանալով խոցել, բայց վախենալով հարվածել՝ մովաբացիները հասկանում էին, որ իզուր է նրանց դեմ դուրս գալը, քանի դեռ նրանք ակնհայտորեն վայելում էին հզոր Աստծո օրհնությունն ու պաշտպանությունը: Սակայն նրանք կարծում էին, թե գուցե հնարավոր լինի թուլացնել կամ չեզոքացնել այդ առավելությունը՝ նրանց վրա դնելով որևէ զորավոր մոգի «ծանր» անեծքը: Այդպես թուլացած, ինչպես մյուս մարդիկ, նրանք կարող էին ենթարկվել հարձակման՝ լիակատար հաջողության հույսով:

Այս մտադրությունը նրանց համար առավել գրավիչ էր նաև այն պատճառով, որ հաջողության դեպքում նրանք կկարողանային վերականգնել այն տարածքները, որոնք երբևէ իրենցն էին, սակայն իսրայելացիները տիրել են դրանց՝ ամորհացիներից նվաճման իրավունքով: Իրոք, եթե իսրայելացիները ոչնչացվեին կամ հետ մղվեին անապատ, Ղովտի որդիները կարող էին ոչ միայն վերատիրանալ կորցրածին, այլև ընդլայնել իրենց նախկին տարածքները: Եվ աբրահամյան ծագում ունեցող մի շարք դաշնակից ցեղերի հետ միասին նրանք կարող էին դառնալ Հորդանանից արևելք գտնվող ողջ երկրի միակ տերը:

Այս մտադրություններով նրանք պատգամավորներ ուղարկեցին նշանավոր գուշակ Բաղաամի մոտ՝ խնդրելով նրան գալ և անիծել Իսրայելին: Պատմության այս հատվածում առաջ են քաշվում խորհրդածության արժանի մի շարք ուսուցանող թեմաներ:

1. Մարդկային հոգեբանություն

Դժվարության մեջ ընկած մարդը հակված է օգնություն փնտրելու իրենից վեր ուժերից: Երբ երկրային միջոցներն սպառվում են, նա դիմում է գերբնականին: Սակայն այստեղ որոշիչն այն է, թե դեպի ո՛ր աղբյուրն է նա դառնում: Մովաբացիները դիմեցին ոչ թե ճշմարիտ Աստծուն, այլ մի մարդու, որի մասին կարծում էին, թե կարող է իր կամքով կառավարել գերբնական ուժերը: Այդ ընտրությունը բացահայտում է ոչ միայն նրանց վախը, այլև նրանց հոգևոր մոլորությունը: ➥ էջ 4, 7

Պարոնտերության համակարգի ծագումն ու զարգացումը

«Պարոնտեր» բառը պատմական աղբյուրներում հայտնվում է միայն 15-րդ դարից, մինչդեռ այն երևույթը, որ այդ բառն արտահայտում է, կարելի է հստակ տեսնել դեռ 10-րդ դարի Հայաստանում: Այս փաստն ինքնին բացահայտում է միջնադարյան հայ իշխանական կյանքի մի էական ճշմարտություն. պարոնտերությունը նոր ստեղծված համակարգ չէր, այլ ձևավորված ու գործած դարեր առաջ, որը 15-րդ դարում պարզապես ստացավ անուն:

Ըստ էության՝ պարոնտերությունն աշխարհիկ ու հոգևոր իշխանության միավորումն էր մեկ իշխանական տոհմի ձեռքում. նույն ընտանիքի անդամներից մեկը բռնում էր կառավարչի գավազանը, մյուսը՝ եպիսկոպոսականը, և երկուսը միասին ապահովում էին, որ հողը, վանքը, ժողովուրդը չհեռանան իրենց իշխանական լիազորություններից: Հայ պատմագիտությունն արդեն անդրադարձել է այս ինստիտուտի առանձին կողմերին, սակայն «պարոնտեր» եզրույթի ծագման և դրա ավելի վաղ արմատների կապի հարցը մնացել է բաց:

«Պարոնտեր» բառն աղբյուրներում առաջին անգամ հայտնվում է 1424 թվականին Սանահինի վանքում գրված Ավետարանի հիշատակարանում, որտեղ կարդում ենք. «Զնորաբողբոջ զեղբորօրորդի նորին զՈւեկն՝ զվայելող սուրբ աւետարանիս... զսրբասէր քահանայսն զպարոն-տէր Յովհաննես»: Արդեն այս ամենավաղ հիշատակությունը բացահայտում է, որ 15-րդ դարում պարոնտերությունը ֆեոդալական հստակ կարգավիճակ էր՝ սեփական եզրութաբանությամբ ու ճանաչված իրադրությամբ: Հոգևոր դասի ներկայացուցիչները մինչ պարոնտեր կոչվելը՝ 14-րդ դարում, հիշվում են աշխարհիկ պարոն կոչումով կամ առանձին գրված «պարոն» և «տեր» բառերով՝ որպես միակազմ տիտղոս: Գրիգոր-Խութլուշա գրչի հիշատակարանում կարդում ենք. «Աղաչեմ և զբազմերախտ հոգեշահ պարոն՝ զմեծ վարդապետն Յոհաննէս, որդի քաջի Իւանէի՝ Որոտան իշխեցողի, որոյ տէր ողորմեսցի, ամէն»: Էմանուել գրիչը հայցում է իր պատվիրատու բարեգթությունը. «Իմ պարոն տէր Յովանէս՝ մաքրամիտ և սրբասնեալ քահանա, խոշորութեանն անմեղադիր լեր, զի ձմեռն էր, և տունս՝ ցուրտ»:

Այսպիսով՝ պարզ է դառնում, որ եղել են բազմաթիվ պարոնտերեր, որոնք պարզապես չեն որակվել նշյալ եզրույթով: Հայ եկեղեցական շատ գործիչներ՝ Գրիգոր Բ Վկայասերը, Ստեփանոս Օրբելյանը, Հովհաննես Օրբելը, Ստեփանոս Տարսայիճը, Արտազի թեմի առաջնորդ Զաքարիա Ծործորեցին, ունեցել են նույն կարգավիճակը, ինչ 15-րդ դարի պարոնտերերը՝ առանց պարոնտեր կոչվելու:

Սակայն ժառանգական հոգևոր-աշխարհիկ իշխանության արմատները շատ ավելի հին են: Ստեփանոս Օրբելյանն իր «Պատմութիւն Նահանգին Սիսական»-ում պատմում է, թե ինչպես 936 թ. Սյունյաց իշխանական ծագումով Գևորգ անունով մի մարդ՝ ամուսնացած, ժառանգ ունեցող, հագնելով «այծեայց», Կատարո վանքի մոտ կառուցում է եկեղեցի, հիմնում եղբայրանոց և սեփականացնում «զվայրն ամենայն շրջակայ ի ժառանգութիւն եկեղեցւոյն»: Ավելի կարևոր տիրույթները ձեռքում պահելու համար Գևորգն իր որդի Ստեփանոսին ևս կրոնավոր է դարձնում:

Վանքերն ու կալվածատիրությունը

Պարոնտերության համակարգի զարգացման մեջ մեծ դերակատարություն ունեցան հայ ֆեոդալների կողմից վանքերի կառուցումը և նրանց մեծաքանակ կալվածքներ նվիրելու հանգամանքը: Անշուշտ, վանքերի կառուցման և հովանավորության դեպքերն ունեին նաև փառասիրական և կրոնական ենթատեքստ, քանի որ միջնադարում բարեգործ էր համարվում այն ֆեոդալը, որն իր հոգու փրկության համար վանք էր կառուցում: Սակայն վանքերի կառուցման տնտեսաքաղաքական դրդապատճառներն ավելի ցայտուն և տրամաբանական են, քան կրոնական մղումով վանք կառուցելու ցանկությունը: Վանական համալիրների կառուցումը և հովանավորումը այն քայլերից էին, որոնք ի վերջո պետք է հանգեցնեին նույն տարածքի հոգևոր և աշխարհիկ իշխանությունների կենտրոնացմանը կառավարող տոհմի ձեռքում: Նախ՝ աշխարհիկ իշխանները վանքը վերցնում էին իրենց հովանու տակ, ինչը ենթադրում էր տվյալ հաստատությունների օգտին կատարել նվիրատվություններ, ապահովել դրանց բարեկեցությունը: Վանքը դառնում էր ազդեցիկ իշխանի սեփականությունը և ենթակա էր առքուվաճառքի: Վանքը փոխանցվում էր որպես ժառանգություն ֆեոդալների սերունդներին:

Օտար նվաճողների տիրապետության օրոք իշխանավորների նվիրատվությունները վանքերին ու եկեղեցիներին կատարվել են ոչ այնքան կրոնական զգացմունքներից դրդված, որքան Եկեղեցու, հոգևորականության համեմատաբար անձեռնմխելի և արտոնյալ կարգավիճակը հաշվի առնելով և դրանից տնտեսական օգուտ քաղելու նպատակով: Այս տեսակետից հետաքրքիր է մեջբերել «Կալվածագրեր» ժողովածուի մեջ զետեղված № 81 առևտրական գործարքի վավերագիրը, որը հարկադրական վաճառքի ցայտուն օրինակ է: Նկատի առնելով վանքին շնորհված պաշտպանունակությունը՝ երևանցի կալվածատեր Մութավելի Ալլահաշուքուրն իր այգու «մեկ տախտակը» նվիրում է Գեղարդավանքին, որովհետև «Երևանու ոմն երևելի իշխան, Հաճի Նովրուզլու ասացեալ ի ձեռն գրոյ և յոլով դրամատուութեան կամէր զայգին իմ գնել և առ ի խաբել զմիտս նորա, անուն եդի այգւոյն իբր մատուցեալ Աթոռոյն գրով միով»:

Այսպիսով՝ օտարի տիրապետության շրջանում կատարված բազմաթիվ նվիրատվությունների հիմնական դրդապատճառներն առաջին հերթին երկրի, առանձին ֆեոդալին պատկանող գավառի քաղաքականապես անկայուն և աննպաստ պայմաններն էին: Քաղաքական հեղհեղուկ իրադրությունը ֆեոդալներին ստիպում էր դառնալ եկեղեցական՝ սեփական կալվածքները հսկելու համար:

Մոնղոլական, ապա թուրքմենական երկարամյա տիրապետությունը կործանարար եղավ հայ իշխանական տների համար: 14–15-րդ դարերում իրենց քաղաքական ազդեցությունը կորցրին երբեմնի հզոր Զաքարյան, Օրբելյան, Վաչուտյան, Պռոշյան, Դոփյան և այլ իշխանական տներ: Հայ աշխարհիկ ֆեոդալների կալվածքների մի մասը բռնագրավեցին նվաճողները, իսկ մնացած մասը նրանք ստիպված նվիրեցին կամ վաճառեցին Եկեղեցուն:

Ի հակակշիռ քայքայվող աշխարհիկ կալվածատիրության՝ 14–15-րդ դարերում որոշակի զարգացում ապրեց եկեղեցական կալվածատիրությունը: Այս հանգամանքը բացատրվում է օտար տիրապետության ժամանակ եկեղեցու ունեցած ապահարկության իրավունքով: Փաստերը վկայում են, որ 15-րդ դարի թուրքմեն գահակալներն իրենց վարած քաղաքականությամբ մեծապես նպաստում էին վանքապատկան հողատիրության ընդարձակմանը: Հայտնի է, որ ակ-կոյունլուներից Ջահանշահը և Երևանի կառավարիչ Յաղուբ Բեկը նպաստեցին 1441 թ. Հայոց կաթողիկոսական Աթոռի՝ Սսից Էջմիածին տեղափոխմանը:

Թուրքմեն կառավարիչները թեմերի առաջնորդներին ու վանահայրերին տված իրենց հրովարտակներով ոչ միայն հաստատել են վանքերի հողատիրական իրավունքները, այլև վանքապատկան հողերն ազատել են հարկերից: Հայտնի են Ջահանշահի 1449 թ. հրովարտակը՝ տրված Տաթևի և Վաղադինի վանքերին, Ջահանշահի կին Բեկում Խաթունի հրամանագիրը՝ տրված Գանձասարի Հովհաննես կաթողիկոսին, Հասան Ալու՝ 1468 թ. հրովարտակը՝ Տաթևի և Վաղադինի վանքերին, Յաղուբ բեկի՝ 1478 թ. հրովարտակը՝ Գանձասարի Հովհաննես կաթողիկոսին: Բերված փաստերը վկայում են, որ 14–15-րդ դարերում վանքապատկան հողատիրությունը զերծ էր օտարումից ու հափշտակումից և ազատ՝ պետական հարկերից: Այս երևույթը հատուկ էր ֆեոդալական հասարակարգին մանավանդ Արևելքում: Հոգևորականությունը՝ որպես իշխող դասակարգ, վաղ միջնադարից գտնվել է արտոնյալ վիճակում: Մահմեդական տիրակալները շարիաթի սկզբունքները տարածում էին վանական հողային տիրույթների վրա և նրանց օժտում «մուաֆի» իրավունքով:

Աշխարհիկ ֆեոդալների նվիրատվությունները հիմնականում տրվում էին այն վանքերին, որոնք գտնվում էին նվիրատուի ֆեոդալական տիրույթների սահմաններում, իսկ վանահայրը ֆեոդալի մերձավոր ազգականն էր կամ էլ նրա ենթական: Հաճախ ֆեոդալական տան որևէ ազդեցիկ անդամ իր ձեռքն էր վերցնում իշխանական տան աշխարհիկ և հոգևոր իշխանությունը: Եվ արդեն սկսած 15-րդ դարից՝ լայն տարածում գտավ պարոն-տեր կոչումը, որը հիմնականում կրում էին այն եկեղեցականները, որոնց ձեռքում էր կենտրոնացած տվյալ տարածքի թե՛ աշխարհիկ և թե՛ հոգևոր իշխանությունը:

Հասան-Ջալալյանները և Գանձասարը

Հասան-Ջալալյան իշխանական տան ներկայացուցիչները ժամանակի ընթացքում սկսեցին զբաղեցնել նաև գավառի հոգևոր իշխանությունը: Արցախում տասնյակ գյուղերի, արտերի, այգիների և անբավ այլ հարստությունների տեր էր Գանձասարի

Բաբելոնի աշտարակը և հարակից հարցեր

↩ էջ 3

Միդրաշի համաձայն՝ աշտարակ կառուցողները, որոնք հրեական աղբյուրներում անվանում են «անջատողական սերունդ», ասել են. «Աստված իրավունք չունի Իր համար ընտրել վերին աշխարհը և մեզ թողնել ստորին աշխարհը. հետևաբար, մենք մեզ համար կկառուցենք աշտարակ, որի գագաթին կուռք կլինի՝ սուրը ձեռքին, որպեսզի թվա, թե այն մտադիր է պատերազմել Աստծո հետ» (Gen. R. xxxviii. 7; Tan., ed. Buber, Noah, xxvii.):

Աշտարակի կառուցումը նախատեսված էր ոչ միայն Աստծուն, այլև Աբրահամին մարտահրավեր նետելու համար, որը շինարարներին կոչ էր անում երկյուղածություն դրսևորել: Հատվածում նշվում է, որ շինարարներն Աստծո դեմ սուր խոսքեր էին ասում՝ նշելով, որ յուրաքանչյուր 1656 տարին մեկ երկինքը ցնցվում էր, և ջուր էր թափվում երկրի վրա, ուստի նրանք այն պահում էին սյուներով, որպեսզի այլևս ջրհեղեղ չլիներ (Gen. R. l.c.; Tan. l.c.; հմմտ. Հով. Փլավ., «Հրեակ. հնախ.», i. 4, § 2). Այդ սերնդի մեջ ոմանք նույնիսկ ցանկանում էին պատերազմել Աստծո դեմ երկնքում (Թալմուդ, Սինհեդրին 109ա): Այս նախաձեռնությունից նրանք խրախուսվում էին, քանի որ երկինք նետված նետերը արյունով կաթում էին, և մարդիկ իսկապես հավատում էին, որ կարող են պատերազմել երկնքի բնակիչների դեմ (Սեֆեր հա-Յաշար, գլուխ 9:12–36): Հովսեփոսի պատմության և Միդրաշի համաձայն՝ հիմնականում Նեբրովթն էր համոզել իր ժամանակակիցներին կառուցել աշտարակը, մինչդեռ այլ ռաբբինական աղբյուրներ պնդում են հակառակը, որ Նեբրովթը բաժանվել է շինարարներից: Մեկ այլ միդրաշական պատմության համաձայն՝ աշտարակի կառուցողների մեկ երրորդը պատժվել է՝ վերածվելով կիսադիվային արարածների, և աքսորվել երեք զուգահեռ վայրեր, որտեղ այժմ բնակվում են նրանց սերունդները:

Հրեա-հռոմեացի պատմաբան Հովսեփոս Փլավիոսն իր «Հրեական հնախոսություններ» աշխատության մեջ (94 թ.) բաբելոնյան աշտարակաշինության պատմությունը ներկայացնում է ըստ եբրայական Աստվածաշնչի: Նա գրում է, որ Նեբրովթն է կառուցել աշտարակը: Նեբրովթը բռնակալ էր, որը փորձում էր ժողովրդին հեռացնել Աստծուց: Այս պատմության մեջ Աստված շփոթեցրել է ժողովրդին, այլ ոչ թե ոչնչացրել, քանի որ Ջրհեղեղով ոչնչացումը նրանց չէր սովորեցրել աստվածավախ լինել. «Հենց Նեբրովթն էր, որ նրանց հասցրեց այդպիսի վիրավորանք և Աստծո նկատմամբ արհամարհանք: Նա Քամի՝ Նոյի որդու թոռն էր, համարձակ մարդ և մեծ ուժ ունեցող: Նա համոզեց նրանց չվերագրել դա Աստծուն, կարծես իր միջոցով էին նրանք երջանիկ, այլ հավատալ, որ իրենց սեփական քաջությունն է այդ երջանկությունն ապահովել: Նա նաև աստիճանաբար կառավարությունը վերածեց բռնակալության՝ չտեսնելով մարդկանց՝ Աստծո վախից հեռացնելու այլ ճանապարհ, քան նրանց իր իշխանությունից մշտական կախվածության մեջ դնելը.... Այժմ բազմությունը շատ պատրաստ էր հետևելու Նեբրովթի որոշմանը և Աստծուն հնազանդվելը համարում էր վախկոտություն: Նրանք կառուցեցին աշտարակ՝ չխնայելով ջանք ու եռանդ և ոչ էլ որևէ չափով անփույթ լինելով աշխատանքի նկատմամբ: Եվ դրա մեջ ներգրավված բազմաթիվ ձեռքերի պատճառով այն շատ բարձրացավ, ավելի շատ, քան որևէ մեկը կարող էր ակնկալել: Սակայն դրա հաստությունն այնքան մեծ էր, և այն այնքան ամուր էր կառուցված, որ դրա մեծ բարձրությունը, առաջին հայացքից, թվում էր ավելի փոքր, քան իրականում էր: Այն կառուցված էր այրված աղյուսից, ամրացված շաղախով, պատրաստված ասֆալտից, որպեսզի ջուր չթողնի: Երբ Աստված տեսավ, որ նրանք այդքան խելագար կերպով են վարվում, Նա նրանց լիովին չոչնչացրեց, քանի որ նրանք իմաստուն չէին դարձել նախկին մեղավորների ոչնչացմամբ [Ջրհեղեղի ժամանակ], բայց Նա նրանց մեջ իրարանցում առաջացրեց՝ նրանց մեջ տարբեր լեզուներ ստեղծելով և այդ լեզուների բազմության պատճառով միմյանցից օտարացնելով: Այն վայրը, որտեղ նրանք կառուցեցին աշտարակը, այժմ կոչվում է Բաբելոն՝ այն լեզվի խառնաշփոթի պատճառով, որը նրանք նախկինում հեշտությամբ հասկանում էին, քանի որ եբրայեցիները Բաբելոն բառով նկատի ունեն խառնաշփոթ: Սիբիլը նույնպես հիշատակում է այս աշտարակը և լեզվի խառնաշփոթը, երբ ասում է. «Երբ բոլոր մարդիկ մեկ լեզվով էին խոսում, նրանցից ոմանք կառուցեցին բարձր աշտարակ, կարծես դրանով երկինք էին բարձրանալու, բայց աստվածները քամու փոթորիկներ ուղարկեցին և տապալեցին աշտարակը և բոլորին տվեցին յուրահատուկ լեզու, և այդ պատճառով քաղաքը կոչվեց Բաբելոն»»:

Ժամանակակից գիտական փնտրտուքներ: Բաբելոնի աշտարակի պատմության թեման՝ Աստծո և մարդկանց միջև մրցակցությունը, տեսնում ենք նաև Ծննդոց գրքի Ադամի և Եվայի պատմության մեջ: Առաջին դարում հայտնի հրեական մեկնաբանությունը, որ կարդում ենք Հովսեփոս Փլավիոսի գրվածքներում, աշտարակի կառուցումը ներկայացնում է որպես Աստծո դեմ անհնազանդության գործողություն, որը պատվիրել էր ամբարտավան բռնակալ Նեբրովթը: Ժամանակակից գիտական գրականության մեջ այս դասական մեկնությանը մարտահրավերներ են նետվել՝ շեշտը դնելով պատմությունում նշված մշակութային և լեզվական միատարրության հստակ դրդապատճառի վրա. բնագրի այս բացատրությունը Աստծո գործողությունները դիտարկում է ոչ որպես հպարտության համար պատիժ, այլ որպես մշակութային տարբերությունների պատճառաբանություն՝ Բաբելոնը ներկայացնելով իբրև քաղաքակրթության օրրան:

Ծննդոց 11:8-ը հայտնում է, որ աշտարակի կառուցումն անավարտ էր, երբ այն կառուցողները ցրվեցին աշխարհով մեկ. «Տերն այնտեղից նրանց ցրեց ողջ աշխարհով մեկ, և դադարեցին քաղաքը կառուցելուց»: Սակայն 5-րդ համարում Տերն այցելում է աշտարակի կառուցման վայր՝ «տեսնելու մարդկանց որդիների կառուցած քաղաքն ու աշտարակը» (եբրայերենում բայը դրված է կատարյալ ժամանակով): ↪ էջ 7

միջնադարյան Հայաստանում (10–15-րդ դդ.)



Հասան-Ջալալ Դոլայի տապանաքարը Գանձասարի վանքում՝ «Այս է հանգիստ մեծին Ջալալին: Աղաթթս յիշեցեք: ԹՎ: ՊՁ» գրությամբ:

Արծրունիների տոհմից ծագող վանահայրերը 14–15-րդ դարերում մեծ տնտեսություններ ունեին Վասպուրականի վանքերում՝ նստավայրեր ունենալով Աղթամար և Լիմ կղզիները: Նրանք 14–15-րդ դարերում իրենց ձեռքում էին կենտրոնացրել այս շրջանի թե՛ աշխարհիկ և թե՛ հոգևոր իշխանությունը և շարունակում էին ընդարձակել իրենց ֆեոդալական տիրույթները: Մեզ է հասել Լիմի Ս. Գևորգ վանքին պատկան հողերի՝ 1305 թ. կալվածագիրը, ըստ որի՝ Զաքարիա կաթողիկոսին հաջողվում է զանազան գյուղերից ձեռք բերել ընդարձակ կալվածքներ և դրանք վակֆ անել վանքին: Այսպես՝ նա վանքին է տվել Ամյուկին ենթակա Ջանիկի դաշտից երկու հողակտոր, Նորաշեն գյուղում՝ հինգ հողակտոր և մեկ ջրաղաց:

Ամբողջացնելով բերված փաստարկները՝ կարող ենք ասել, որ պարոնտերության համակարգը՝ որպես երևույթ, ծագել է ոչ թե 15-րդ դարում, այլ առնվազն 10-րդ դարից՝ Բագրատունյաց թագավորության շրջանում, երբ հզոր իշխանական տները ժառանգաբար վերահսկում էին վանքերն ու եպիսկոպոսական աթոռները: Պարոն-տեր կոչումը լայն տարածում է գտել միայն 14-րդ դարի վերջից և 15-րդ դարում, սակայն այն նոր համակարգի անվանում չէր, այլ արդեն գոյություն ունեցող գործելաոճի եզրաբանական ամրագրում: Վանքապատկան հողատիրության կտրուկ ընդլայնումը 14–15-րդ դարերում ոչ թե պատահական էր, այլ գիտակցված ռազմավարություն՝ ֆեոդալական ընտանիքների գոյատևման և նրանց իշխանության վերարտադրման համար: Օտար տիրապետության պայմաններում (մոնղոլական, թուրքմենական) նվիրատվությունները, հարկային արտոնությունները և Եկեղեցու պաշտպանությունակությունը դարձան հայ իշխանական տների (Հասան-Ջալալյաններ, Օրբելյաններ, Դոփյաններ, Պահլավունիներ, Արծրունիներ) վերջին ամրոցը:

Այսպիսով՝ պարոնտերությունը ոչ թե ուշ-միջնադարյան նորույթ էր, այլ միջնադարյան հայկական ֆեոդալիզմի և Եկեղեցու փոխհարաբերությունների շարունակական զարգացման հետևանք, որն իր ամենադասական ձևն ստացավ 15-րդ դարում՝ դառնալով հին նախարարական տների վերջին ամրոցը:

Սպարտակ սրկ. ՍԱՀԱԿՅԱՆ
Քրիստինա ՀԱԿՈԲՅԱՆ

Արծրունիները և Վասպուրականը

Պահլավունիները և Շիրակը

Պահլավունիները նույնպես իրենց տոհմական տիրույթներում աշխարհիկ և հոգևոր առաջնորդներ էին: Հայոց Բագրատունյաց թագավորության անկումից հետո նրանք շարունակեցին իրենց գործունեությունը Շիրակում և հարակից տարածքներում՝ մասնավորապես քաղաքամայր Անիում: 13-րդ դարից նրանք վասալական կախման մեջ էին Զաքարյաններից և նրանց հովանու ներքո ծավալում էին ազգաշահ գործունեություն: 1225 թ. Անիի արքեպիսկոպոս է հիշվում Գրիգոր Պահլավունին, որի եղբայր Ղարիբը զինվորական էր: Նրանք 1225 թ. նորոգում են Մարմաշենի վանքը, կալվածքներ ընծայաբերում Անիի աթոռին: Նրանք գլխավորում են նաև Շիրակի հոգևոր իշխանությունը: Գրիգոր Պահլավունուց հետո Անիի արքեպիսկոպոսի պաշտոնը վարում է նրա որդի Սարգիսը: Վերջինս Բագնայրի վանքի՝ 1262 թվակիր արձանագրության մեջ հիշվում է որպես «Անի մայրաքաղաքի վերադիտող» (տեսուչ, հայրապետ), նաև «տեառն տեղոյս»: Սարգսի եղբորորդի Հովհաննեսը հիշվում է որպես Շիրակ գավառի «հայրապետ», «իշխեցող տեղոյս»: 14–17-րդ դարերում Պահլավունիները նախկինի պես տիրում էին նաև Հավուց Թառ՝ Ամենափրկիչ վանքին և նրա հողատիրույթներին: Սիմեոն Երևանցի կաթողիկոսը վկայում է, որ Գրիգոր Մագիստրոս Պահլավունու (Բջնեցու) սերունդները հաջորդաբար իշխել են այդ վանքում գրեթե մինչև իր ժամանակները: Նրանք վանքը դարձրել են «զհայրենի մուլք» և «որդիք և թոռունք և յետագայ ազգատոհմք սորին, մի զկնի միոյ յաջորդեցին զառաջնորդութիւնն սորին ոչ միայն ի յիշխանութիւնն Հայոց, այլև ի ժամանակս թագաւորացն պարսից մինչև գրէթէ ի ժամանակս մեր»:

15-րդ դարի առաջին կեսին Հայաստանի եկեղեցական կյանքում ազդեցիկ դեր էր խաղում արքեպիսկոպոս Զաքարիա Հավուցթառեցի Պահլավունին: 15-րդ դարի վերջերին և 16-րդ դարի սկզբին Հավուց Թառի վանահայր է հիշվում Զաքարիա վարդապետը, որը ևս Պահլավունի էր: 1487 թ. նա վերստին տիրացավ Գառնիի շրջանում իր տոհմի ժառանգական կալվածքներին՝ այդ կողմերին իշխող Ամիրքյամալ բեկից հինգ հազար դինարով գնելով Մանկուս, Ավանիկ, Կուտիս, Հայոց Թառ, Կուտուց վանք, Ավանասար, Թառնիս, Սուրբ Սարգիս գյուղերն ու Կոխդ գյուղի կեսը: Նշված ինը գյուղերի կալվածագրում Զաքարիան հանդես չի գալիս իբրև Հավուց Թառի վանահայր: Չի արձանագրվում, որ այդ գյուղերը վակֆ են արվում (նվիրաբերվում են) վանքին, քանի որ, ինչպես հավաստում է Սիմեոն Երևանցին, Զաքարիայի տոհմի անդամներն «ի բնէ անտի ազատազունք էին և անուանիք, շատազգ և հարուստք, յորոց թէպէտ ոմանք վանականք լինէին, ոմանք աշխարհականք, սակայն մի էին տամբք և ընչիւք, և իւրեանց էր համարեալ գեօղն և վանքն առանց խտրութեան»: Զաքարիան կարողանում է շահ Թահմասպից մոտ 1524 թ. արտոնագիր ստանալ, որով նշված գյուղերը պետք է մուլք վճարեին Զաքարիային: Նշված փաստերի հիման վրա կարող ենք ենթադրել, որ թեև դրանք «վակֆային» սեփականություններ էին, սակայն գործնականում հանդես էին գալիս որպես Զաքարիա վարդապետի սեփական մուլքեր:

Իսահակ եպս. Պողոսյան. «Հայոց ինքնության արեզակը»

(վիպակ Սուրբ Մեսրոպ Մաշտոցի մասին)

Մայրենիի ծնունդը

«Բաց, Տէր, զդուռն ողորմութեան,
Որ ողբալով կարդամ առ քեզ,
Քանզի քեզ միայնոյ մեղայ,
Ողորմեա՛ ինձ, Աստուած»
(Շարակնոց):

Ժամանակ անց, գնահատելով Մեսրոպ վարդապետի խոհուն իմաստությունն ու գիտելիքների նկատմամբ անհուն ծարավը, հայրապետը իր մոտ կանչեց նրան.

– Վարդապե՛տ, ինձ թվում է՝ ժամանակն է արդեն, որ գնաս փոքր-ինչ ավելի հեռու՝ Միջագետք, այնտեղ, մեր հարազատ ու նվիրական նպատակին ընդառաջ, օգտաշահ հանդիպումներ ունենաս մեծանուն մարդկանց հետ, հաղորդակցվես աշխարհում հոսող իմաստության գետերին… Մենք անհրաժեշտը կտնօրինենք:

– Ինչպես որ Տերը կամենա, հայրապե՛տ,– իրեն հատուկ ողջամտությամբ վրա բերեց Մեսրոպ վարդապետը:

– Բայց նկատի ունեցիր, որ պետք է գործել սաստիկ վերապահ՝ չսասանելու արտաքին խաղաղությունն ու հեռու մնալու ներքին անմիաբանության առաջբերումից:

Մեսրոպ վարդապետը լուռ համաձայնության նշան արեց: Նա էլ, հայրապետն էլ քաջ գիտակցում էին, թե որքան համարձակ ու հավակնոտ նպատակ են իրենց առջև դրել: Մեսրոպ վարդապետն արդեն բավական ճանապարհ էր անցել, իսկ Սահակ հայրապետը տևական ժամանակ նամակագրության մեջ էր Վռամշապուհ արքայի հետ:

Բանն այն էր, որ դեռևս Արկադ կայսեր հիվանդանալու ժամանակ, երբ Բյուզանդիայում անկարգություններ էին սկսվել, հայոց նախարարների պնդմամբ՝ Խոսրով թագավորին փոխարինած Վռամշապուհ արքան գնացել էր Միջագետք՝ նպաստելու պարսկա-հռոմեական վեճերի կարգավորմանն ու կարգ ու կանոնի հաստատմանը: Այնտեղ էլ արքան տեղեկացել է հայկական հին նշանագրերի մասին: Նախքան այդ՝ հմուտ քարտուղար ունենալու նպատակով փնտրել էր Մեսրոպին, բայց չէր գտել, քանի որ Մեսրոպն արդեն հեռացել էր արքունիքից: Այդ ընթացքում Հաբել անունով մի քահանա էր ներկայացել նրան՝ ասելով, որ Դանիել եպիսկոպոսի օգնությամբ կարող է ստեղծել հայերեն տառեր: Բայց Վռամշապուհն առանձնապես հույս չէր կապել նրա ասածների հետ: Սակայն տեղեկանալով, որ Սահակ հայրապետը նույնպես զբաղված է հայերեն գրերի հարցով, Վահրիճ անունով մի մարդու էր ուղարկել Հաբելի մոտ, և նրանք միասին ուսումնասիրել էին Դանիելյան գրերը: Դրանից հետո Հայրապետն ու Մեսրոպը ևս լծվել էին նշանագրերն ուսումնասիրելու աշխատանքին, բայց հասկացել, որ, դժբախտաբար, այդ տառերը չեն կարող լիարժեքորեն արտահայտել հայերենի հնչյունները:

Այսպես՝ ամիսներ անց հայոց հոգևոր մայրաքաղաք Վաղարշապատում, Սահակ հայրապետի նախաձեռնությամբ, մի մեծ ընդհանուր ժողով հրավիրվեց, որին ներկա էին Վռամշապուհ արքան, մի շարք երևելի իշխաններ, ինչպես նաև եկեղեցու վարդապետաց և եպիսկոպոսաց դասի զգալի մասը: Ժողովը տևեց օրեր շարունակ, և ոմանք հանդես եկան մի շարք մտահոգություններով: Եկեղեցու, այսպես կոչված, պահապանողական դասը, նրանք, որ քաջահմուտ էին ասորերենի մեջ և զգալի թիվ էին կազմում, սկզբնապես բավական անհողդողդ էին՝ համարելով, որ ասորերենը՝ որպես վաղքրիստոնեական լեզու, ունի բարձրագույն սրբություն: Եվ քանի որ եկեղեցական ու առհասարակ կրթական ողջ համակարգը հիմնված էր ասորերեն և հունարեն բնագրերի ու շարադրանքի վրա, մտավախություն կար, որ հայերենը կարող է նվազեցնել աստվածային լեզվի հեղինակությունը: Հոգևորականների համեմատաբար ավելի ուսյալ շրջանակը՝ Հայոց արևմտյան շրջաններից, կամ, այլ խոսքով, մշակութային պահպանողականները, հակված էին խնդիրը թողնելու ապագա սերունդներին՝ կարծելով՝ հունարենն ու ասորերենը լիովին բավարար են հետագա առաջընթացի համար: Մանավանդ որ հայտնի էլ չէր, թե ինչ արդյունք և ինչպիսի վերջաբան պիտի ունենար նոր գրերի ստեղծումը: Ուրիշ մտահոգություններ էլ կային. թե նոր գիրը կարող է թուլացնել կապը քրիստոնյա աշխարհի հետ և նորանոր խնդիրներ ծագեցնել: Իսկ աշխարհիկ ու հոգևոր որոշ պաշտոնյաներ, գիտակցելով հանդերձ, որ հայոց գիրը նաև պետական ինքնության հզոր խորհրդանիշ է լինելու, այդուամենայնիվ, զգուշանում էին հարցի քաղաքական հետևանքներից, քանի որ Հայքն այդ շրջանում բավական թույլ էր ու երկատված: Այդուհանդերձ, ինչպես հայտնի դարձավ հետագայում, բոլորն էլ կողմ եղան, որ Աստծու հետ խոսեն հարազատ ու մայրենի լեզվով և հարցը չթողնեն հետագային:

Շարունակելի

Յակոբ Պատրիարք Նալեան. **Քարեգործութեան երեք տեսակներու մասին, այսինքն՝ ողորմութեան, պահքի եւ աղօթքի**

↩ *Էջ 3*

Չորրորդ՝ ուսուցանել տգէտները:

Հինգերորդ՝ աղօթել հալածողներուն համար:

Վեցերորդ՝ մխիթարել տրտմեալները:

Իսկ մարմնաւոր ողորմութիւնները ասոնք են.

Նախ՝ կերակրել անօթիները:

Երկրորդ՝ խմցնել ծարաւները:

Երրորդ՝ հագցնել մերկերը:

Չորրորդ՝ այցելել հիւանդները:

Հինգերորդ՝ մխիթարել բանտարկուածները:

Վեցերորդ՝ հաւաքել օտարները:

Եօթներորդ՝ թաղել տէր չունեցող մեռելները:

Ութերորդ՝ [ողորմութիւն] տալ աթոռներուն [թեմերուն], վանքերուն եւ եկեղեցիներուն: Եւ մանաւանդ Աստուծոյ անունով Սուրբ Երուսաղէմին եւ մեր փրկութեան տնօրինական վայրերուն: Որովհետեւ առաքելական կանոն է ունեցուածքէն տասանորդ տալ Սուրբ Երուսաղէմին, քանի որ առաքեալները ուր որ կը քարոզէին՝ քրիստոնեաներէն ողորմութիւն կը հաւաքէին եւ Երուսաղէմ կը ղրկէին՝ որբերուն եւ այրիներուն, ինչպէս նաեւ հոգեպահիկ աղքատներուն: Ով որ աննախանձ միտքով կ'ուզէ իմանալ, թող Սուրբ Աւետարանը եւ առաքեալներուն գրութիւնները բանայ ու տեսնէ, թէ ինչքա՜ն կարևոր է Սուրբ Երուսաղէմին ողորմութիւն տալը: Ատոնցմէ մէկը ներկայացնեմ, միւսները դուն միտքով իմացիր: Սուրբ Երուսաղէմի յատուկ Գանձապետը Քրիստոս է, որովհետեւ գանձանակին դիմաց կը նստէր ու կը նայէր, թէ ո՛վ կու տայ, եւ ո՛վ դատարկաձեռն կ'ելլէ ու տաճար կը մտնէ: Մէկ լումայ տուող այրի կինը ինչքա՜ն երանեց՝ ըսելով՝ այդ տառապեալ այրին աւելի շատ նետեց գանձանակին մէջ [տես Մարկ. 12.41–44]:

Իւրաքանչիւր բարի գործ՝ առանց ողորմութեան, շիջած ճրագներու նման են եւ ո՛չ թէ վառած:

Պահքի մասին

Պահքը մարմինը ճնշելն է եւ ախորժակը արգիլելը փափուկ եւ պարարտ կերակուրներէ: Որովհետեւ միշտ ուտելն ու խմելը մարմինը կ'ապստամբեցնեն հոգիին դէմ եւ հոգին ալ՝ Աստուծոյ: Շատակեր ու պահք չպահող մարդը միտքով կը թանձրանայ, երկնային, բարակ ու նուրբ իմաստութիւնները չի՛ կրնար իմանալ: Արդարև, Մովսէս, որ Աստուծոյ հետ կը խօսէր, նախ պահք կը պահէր, իր մարմինը կը ճնշէր, միտքով կը նրբանար եւ ապա միայն Աստուծոյ հարցուցածին պատասխան կու տար: Իսկ կռապաշտ փիլիսոփաները ծոմով ու պահքով այնքա՜ն իմաստութեան հասան, որ իրենցմէ ոմանք օրը մէկ անգամ չամիչ կ'ուտէին միայն:

Սուրբ ճգնաւորներէն շատեր ծոմի եւ պահքի միջոցով մարգարէութեան եւ զանազան շնորհներու իմաստութիւնն ստացան: Դանիէլ մարգարէն պահքի միջոցով Նաբուգոդոնոսորի գերիվեր երազները կը մեկնէր. պահքի միջոցով Գաբրիէլին եւ Միքայէլին հետ կը խօսէր եւ անոնցմէ իմացաւ ու խելամուտ եղաւ Քրիստոսի գալուստի ժամանակի մասին: Եղիան քառասուն օր պահք պահելով՝ Քորեբ լեռան վրայ Աստուծոյ տեսութեան արժանացաւ: Արդարև, միտքը պարարտ եւ փափուկ կերակուրներէն կը ծանրանայ, կը բթանայ եւ չի կրնար բարձունքները ելլել, ինչպէս բազէն, որ ծոմ ըլլայ [այսինքն՝ անօթի], շուտով կը հասնի իր որսին. իսկ եթէ կերած ըլլայ, չի կրնար բարձրանալ ու իր որսը բռնել: Հետևաբար կռապաշտ իմաստունները կ'ըսէին, թէ՝ ծոմ պահողի հոգին իրմէ դուրս կ'ելլէ եւ փութով ինչպէս արծիւը բարձունքները կը սլանայ:

Տակաւին պահքը մարդուն կեանքը կ'երկարէ, ինչպէս յայտնի է ճգնաւորներէն: Արդարև, Ադամը եթէ այն ծառէն կերած չ'ըլլար, միշտ ողջ կը մնար: Ենովքը, որ ծոմ պահեց, դրախտ յափշտակուեցաւ եւ տակաւին ողջ է: Դարձեալ՝ պահքը կը յաղթէ մարմնաւոր եւ հոգևոր թշնամիներուն, որովհետեւ Սրբուհի Յուդիթը պահքի միջոցով յաղթեց Հողոփեռնէսին [Յուդիթ 8, 10–13 գլուխներ]. իսկ Եսթեր թագուհին Արտաշէսի ժամանակ հրեայ Համանը փրկեց կոտորուելէ [Եսթեր 3–8 գլուխներ]. Յուդա Մակաբայեցին պահքով յաղթեց Անտիոքոս չար թագաւորին [Ա. Մարկ. 3–4, 8, 10 գլուխներ]: Պահքը հոգևոր թշնամիին ալ կը յաղթէ. ինչպէս որ ամէն բանի յաղթող Քրիստոսը, մեզի օրինակ տալու համար, քառասուն օր պահք պահեց եւ յաղթեց սատանային՝ լեռան փորձութեան [Մատթ. 4.1–11]. իսկ առաքեալներուն կ'ըսէ, թէ՝ այս չար ոգին ուրիշ կերպով չի՛ ելլեր, ապա թէ ոչ աղօթքով եւ պահքով [Մատթ. 17.21]: Արդարև, սատանան դեւի մը հրաման կու տայ, որ դիւահարէ մը ելլէ ու ճգնաւորի մը մէջ մտնէ. ճգնաւորին մէջ մտնելէ ետք այս վերջինս կը սկսի ալ աւելի պահք պահել ու աղօթել. դեւը ձանձրանալով կ'ելլէ, որպէսզի փախչի: Սուրբ ճգնաւորը կ'ըսէ անոր. ո՛վ չար, ո՞ւր կը փախչիս, եկո՛ւր, որ միասին բնակինք. դեւը կը պատասխանէ. Աստուած հեռու պահէ, ո՛վ չար ծեր. զիս անօթի ու ծարաւ սպաննեցիր, եւ կը հեռանայ անկէ:

Դարձեալ՝ մեր աղօթքը կը գեղեցկացնէ պահքը, ինչպէս Ռաֆայէլ հրեշտակը Տոբիթին ըսաւ, թէ՝ աղօթքները բարի են՝ պահքով ու ողորմութեամբ [Տոբիթ 12.8]:

Դարձեալ՝ պահքը մարդուն խոնարհութիւն կ'ուսուցանէ, ինչպէս կ'ըսէ Դաւիթ մարգարէն. պահեցողութեամբ անձս կը խոնարհեցնէի [Սաղմ. 34.13]:

Դարձեալ՝ պահքը Աստուծմէ հեռացածները Աստուծոյ կը մօտեցնէ, ինչպէս Յովէլ մարգարէն կ'ըսէ. ձեր Տէր Աստուծոյն դարձէք պահեցողութեամբ, լալով ու կոծով [Յվէլ 2.12]:

Բայց հազար ափսո՜ս. ներկայիս ո՞ւր է լաց եւ կոծ պահեցողութեան օրերուն: Արդարև, ներկայիս պահեցողութեան օրերը անզգամներուն համար չարութեան նիւթ եղած են, որ ուտիք օրերուն չգործած չարիքը Մեծ Պահքի օրերուն կը գործեն: Այդպիսի պահք պահելու մասին Աստուած Եսայի մարգարէին բերանով կ'ըսէ, թէ պահքի օրերուն ձեր ցանկութիւնները (կամքը) կը կատարէք [Ես. 58.3]: Այդպիսի մարդոց պահքը Յեզաբէլի պահքն է, որ պահք պահել տուաւ ու Նաբոթը սպաննեց [Գ. Թագ. 21.1–14]:

Ներկայիս Յեզաբէլի նման չարերը Եկեղեցին կը տապալեն. անոնց ձեռքէն եթէ գայ, մարդ սպաննելն ալ բան մը չէ այդպիսիներու համար, որ թէեւ արարք գործելուն չեն հասնիր, սակայն կամքով սպանողներ են: Որորվհետեւ բարի եւ չար գործերուն հիմքը կամքն է. եթէ կամքը բարի է, գործերն ալ բարի են, իսկ եթէ կամքը չար է, գործերն ալ չար են, քանի որ չար ծառը չար պտուղ կու տայ [Մատթ. 7.17–18]:

Տակաւին, սուրբ պահքը ազա՛տ է անկարգութենէ եւ հոգիով խոնարհներուն մէջ կը փայլի: Գիտէ՛ սատանան, որ Աստուծոյ համար պահքն ու աղօթքը խիստ ընդունելի են, եւ իր չար գլուխը Քրիստոսի կողմէ պահքով ու աղօթքով խորտակուեցաւ, ինչպէս նաեւ [հիմա ալ] կը խորտակուի բարի պահեցողներուն կողմէ. այդ պատճառով ան կը ջանայ, խռովութիւն սերմանելով, տեղ եւ անկողին ստեղծել խռովարարներուն հոգիներուն մէջ, որ անարժանութեամբ ճաշակել կու տայ Քրիստոսի մարմինն ու արիւնը, որով ճաշակողը կը պատժուի ու կը պատուհասուի: Սակայն Աստուծոյ համար կ'ըլլայ՝ կշռեցէ՛ք ըսածս եւ զուր տեղ մի՛ բարկանաք ձեր ծառային. տեսէ՛ք, այնպէս չըլլայ, թէ ինչ որ կ'ուզէք, այնպէս ընէք: Իսկ եթէ այդպէս է, Աստուծոյ սիրով կ'աղաչեմ ձեզ. ձեր հոգին մեղա է, այդ սուրբ պահքը սրբութեամբ, խաղաղութեամբ եւ պարկեշտութեամբ պահեցէ՛ք, որովհետեւ մեր ազգը մեղք է, որ մի քանի մարդոց պատճառով քրիստոնեայ այլ ազգերու մէջ վատաբանուի: Եւ չըլլայ, որ մարգարէին վայը ժառանգենք, ինչպէս Աստուած Եսայիի միջոցով կ'ըսէ 58-րդ գլուխին մէջ, թէ հակառակութեան եւ կռիւներու մէջ պահք կը պահէք. ի՞նչ պէտք են Ինծի այդպիսի պահքի օրեր. դուք պիտի գաք եւ բողոքէք Ինծի, բայց ես պիտի չլսեմ ձեզ [Ես 58.4]: Իսկ նիհուէացիներուն պահքը ընդունելի եղաւ եւ զԱստուած հաշտեցուց [Յովն. 3.5, 10]: Յովէլ մարգարէն ալ Աստուծոյ բերանով կը պատուիրէ, թէ՝ սրբեցէ՛ք պահքը եւ ո՛չ թէ պղծեցէք [Յվէլ 1.14, 2.15]: Ի վերջոյ, ինչ՞ ըսեմ. պահքը մարդս Քրիստոսի տեսութեան կ'արժանացնէ, ինչպէս Աննա մարգարէուհին, որ տաճարին մէջ պահք կը պահէր ու կ'աղօթէր եւ Քրիստոսի տեսութեան արժանացաւ [Ղուկ. 2.36–38]: Իսկ առաքեալները, որոնք Քրիստոսի համբարձումէն ետք սրբապէս պահք պահեցին, Սուրբ Հոգիին արժանացան:

Դարձեալ՝ ծոմ պահող մարդուն թուքը օձ կը սպաննէ. ի՞նչ զարմանք, եթէ սատանան ալ սպաննէ: Դարձեալ՝ օձը՝ հին խորխը, ծոմ պահելով կը մերկանայ, եւ մենք մեղքերու հնութենէն պահքով պիտի մերկանանք: Դարձեալ՝ ուտելու պատճառով Ադամն ու մենք այս ցաւալի երկիրը ինկանք եւ պահքի միջոցով առ Աստուած պիտի ելլենք այս աշխարհի բանտէն: Ասոր օրինակը հնդիկներու մուկն է, որ հնդկական ընկոյզը կը ծակէ եւ ներս մտնելով՝ այնքա՜ն կ'ուտէ, որ կը գիրնայ. [յետոյ, սակայն,] նեղ ծակէն դուրս չի՛ կրնար ելլել. ուստի անճար մնալով՝ այնքա՜ն չ'ուտեր [պահք կը պահէ], մինչև որ նախկին չափին հասնի եւ ապա դուրս կ'ելլէ:

Այսպէս ալ մենք, Ադամին ուտելով, այս աշխարհ մտանք. մեղքեր ուտելով՝ գերցանք եւ աշխարհէն չենք կրնար ելլել ու Աստուծոյ մօտ մտնել. հետևաբար պէտք է պահք պահենք, որպէսզի առաջին մեր վիճակին հասնինք եւ աշխարհէն ելլելով՝ Աստուծոյ մօտ մտնենք:

Պահքը հոգիին լուացարանն է,
նաեւ մարմինին սուրբ պահարանը.
մարդը հրեշտականման կը դարձնէ
եւ երկինքի խորան կը թռցնէ:

Շարունակելի

«Քրիստոնէական ուսանելի», 1806
Աշխարհաբարի վերածեց
Վարանդ (Յակոբ) ՔՈՐԹՄՈՍԵԱՆԸ

Ճնորհ՝ առանց փրկության. Աստծո կամքը և մարդու երկմտանքը

↩ *էջ 4*

2. Կեղծ և ճշմարիտ գերբնականի տարբերությունը

Մարդը հաճախ չի տարբերում Աստծուց եկող զորությունը մարդկային կամ սատանայական ազդեցություններից: Այն, ինչ մարդիկ վերագրում են կախարդանքին կամ մոգությանը, իրականում կամ ինքնախաբեություն է, կամ Աստծո թույլտվությամբ գործող ուժ, բայց երբեք՝ մարդու անկախ իշխանություն: Ճշմարիտ գերբնականը միշտ ենթակա է Աստծո կամքին և ծառայում է Նրա նպատակներին, մինչդեռ կեղծը հիմնված է վախի, անտեղյակության և սնահավատության վրա:

3. Ճշմարիտ ճանապարհը

Այս պատմությունը սովորեցնում է, որ դժվարության պահին մարդը պետք է զգուշանա սխալ աղբյուրների դիմելուց: Աղոթքն Աստծուն միակ վստահելի ուղին է՝ գերբնական օգնություն ստանալու համար: Մնացած բոլոր փորձերը՝ շրջանցելու Նրա կամքը կամ զորություն «գնելու» զոհաբերություններով ու կախարդական գործողություններով, դատապարտված են ձախողման:

4. Մարդը՝ գերբնական զորությունների գիտակցությամբ և դրանց գործադրման մեջ աստվածային իշխանության զգացումով

Բաղաամն ասաց նրանց. «Այս գիշեր մնացե՛ք այստեղ, և ես պատասխան կտամ այն բաների մասին, ինչ Տերը կհայտնի ինձ» (Թվեր ԻԲ 8): Բաղաամի գիտակցությունը մեծ զորությունների մասին հստակ երևում է պատմությունից: Բաղաամն օժտված էր մեկ ճշմարիտ Աստծո մասին՝ սովորականից բարձր գիտությամբ, ուներ մտքի և հանճարի բարձր շնորհներ, ճշմարտության ներքին ըմբռնում և կարողանում էր թափանցել երևույթների խորքը: Մի խոսքով՝ նա և՛ բանաստեղծ էր, և՛ մարգարե:

Բաղաամի գիտակցությունը, որ իր զորությունները ենթակա են Աստծուն, նույնպես հստակ է: Պատմության ընթացքում նա բազմիցս խոստովանում է, որ իր բոլոր մեծ կարողություններն իրենը չեն, այլ Աստծուց ստացված են և կարող են գործադրվել միայն Նրա թույլտվությամբ: Սա ակնհայտ է նաև այս հատվածում (հմմտ. Թվեր ԻԲ 8, 13): Նա կարծես գիտակցում էր Իսրայելի կապը ճշմարիտ Աստծու հետ և կասկածում էր, թե իրեն կթույլատրվի նրանց անիծել:

Այստեղ տեսնում ենք՝

1. Բաղաամի մեղքն Աստծու առաջ: Իմանալով այն, ինչ գիտեր, նա պետք է անմիջապես և վճռականորեն մերժեր Բաղակի խնդրանքը: Սակայն ասաց. «Այս գիշեր մնացեք այստեղ.…»: Նա տենչում էր «գուշակության վարձը», «սիրում էր անիրավության վարձատրությունը»: Անօրեն շահի համար նա պատրաստ էր իր մեծ շնորհները ծառայեցնել չար նպատակների և հույս ուներ ստանալու թույլտվություն՝ գնալու Բաղակի պատգամավորների հետ:

2. Մարդը՝ գերբնական այցելություն ստանալիս: «Աստված եկավ Բաղաամի մոտ և նրան ասաց. «Ովքե՞ր են այս մարդիկ, որ քեզ մոտ են» (հմմտ. Թվեր ԻԲ 9–12): Սա արտասովոր այցելություն էր: Սակայն այստեղ կա ընդհանրական նշանակություն ունեցող երեք կետ:

Հավանաբար երազի կամ տեսիլքի միջոցով էր, որ Աստված այդ գիշեր եկավ Բաղաամի մոտ և հայտնեց Իր կամքը: Բազմաթիվ կերպերով Աստված կարող է ներթափանցել մարդու միտքը և ազդել նրա գիտակցության վրա: Մարդու կամքի համաձայնությամբ կամ առանց դրա՝ նրա կամքին հակառակ, Աստված կարող է ներթափանցել նրա միտք և խոսել նրա հետ:

3. Աստծո հետաքրքրությունը մարդու կյանքի հանդեպ: Սա երևում է Բաղաամին ուղղված Նրա հարցում. «Ովքե՞ր են այս մարդիկ, որ քեզ մոտ են» (Թվեր ԻԲ 9), և արգելքում՝ «Մի՛ գնա նրանց հետ և մի՛ անիծիր ժողովրդին, նա օրհնյալ է» (Թվեր ԻԲ 12): Տերը մտահոգված էր Բաղաամի բարօրությամբ, ցանկանում էր, որ նա չընկնի իրեն ներկայացված գայթակղությունների մեջ: Այսպես էլ այսօր Աստված բազմաթիվ ձևերով հայտնում է Իր հոգածությունը մարդու փրկության համար և Իր խոր հետաքրքրությունը յուրաքանչյուր մարդկային կյանքի հանդեպ:

4. Աստծո իշխանությունը մարդու կյանքի վրա: «Աստված ասաց Բաղաամին. «Մի՛ գնա նրանց հետ…»: Հրամայելն Աստծունն է, իսկ հնազանդվելը՝ մարդունը: Մարդու բարօրությունն Աստծո իշխանության գործնական ընդունումը և Նրա կամքին ենթարկվելն է:

5. Մարդը՝ անհավատարիմ աստվածային հայտնությանը: «Առավոտյան վեր կենալով՝ Բաղաամն ասաց Բաղակի իշխաններին…» (Թվեր ԻԲ 13): Աստծո պատգամի ամենակարևոր մասը՝ այն, որը կարող էր վերջնականապես փակել այս գործը, նա թաքցրեց Բաղակի պատգամավորներից: Նա խոսեց այնպես, կարծես հնարավոր է անիծել նրանց, և կարծես ինքը հակված էր ընդունելու Բաղակի խնդրանքը: Նրա ագահությունն առավել ևս դրսևորվում է այստեղ. նա չէր ցանկանում ընդմիշտ կորցնել «գուշակության վարձը», որ բերել էին պատգամավորները:

Բաղաամի կերպարն այնքան էլ եզակի չէ, որքան թվում է: Եթե ժամանակի, երկրի և դիրքի արտաքին հանգամանքները մի կողմ դնենք, կարող ենք փողոց դուրս գալ և գրեթե յուրաքանչյուր երրորդ մարդու մեջ Բաղաամի գտնել: Նա պատկանում էր դեռևս մեծաթիվ այն դասին, որ տեսականորեն ճանաչում է Աստծուն և իրականում վախենում Նրանից, բայց որի սերն ու երկյուղը Աստծո հանդեպ իր միտքը ղեկավարող սկզբունքները չեն: Նրանք համոզված են, բայց դարձի չեն եկել: Նրանք կարող են գնահատել և ցանկանալ Աստծո ընտրյալների արտոնությունները, ցանկանում են «մեռնել արդարների մահով», բայց չեն ցանկանում ապրել նրանց կյանքով: Նրանք ուզում են ծառայել Աստծուն, բայց նաև ծառայում են մամոնային, և այս երկու հակամարտ ուժերի պայքարի մեջ նրանց կյանքը դառնում է դառը, իսկ մահը՝ վտանգավոր:

6. Մարդիկ՝ որպես անհավատարիմ պատգամաբերներ: «Մովաբացի իշխանները վեր կենալով՝ եկան Բաղակի մոտ ու ասացին. «Բաղաամը չկամեցավ գալ մեզ հետ» (Թվեր ԻԲ 14): Բաղաամը իշխաններին ասաց Աստծուց ստացածից պակաս, իսկ նրանք Բաղակին փոխանցեցին ավելի քիչ, քան լսել էին Բաղաամից: Այդպես, երբ պատասխանը հասավ Մովաբի թագավորին, այն արդեն Աստծու խոսքը չէր, այլ մարդու խոսքը՝ պարզապես Բաղաամը չկամեցավ գալ՝ առանց նույնիսկ ակնարկելու, որ Աստված էր արգելել նրան:

5. Սուրբգրային դասեր

Աստվածային հայտնությունները երբեք սահմանափակված չեն եղել որևէ մեկ ժողովրդի, երկրի կամ դարի մեջ: Նույնիսկ տարբեր ազգի հեթանոս մարդիկ լսել են աստվածային ձայներ և վկայել աստվածային տեսիլքներ:

Մեծ շնորհները միշտ չէ, որ ուղեկցվում են մեծ բարոյականությամբ: Մտքի լուսավորությունը պարտադիր չէ, որ ուղեկցվի սրտի դարձով: Լայն է տարբերությունը հոգևոր շնորհների և հոգևոր բնավորության միջև:

Մեծ շնորհները ենթադրում են մեծ պատասխանատվություն և լուրջ վտանգ. պատասխանատվություն՝ դրանք Օրհնատուի կամքի համաձայն գործադրելիս, և վտանգ՝ դրանք սխալ օգտագործելիս:

Ագահության գայթակղությունը չափազանց նուրբ և զորեղ է, այն հարձակվում է նույնիսկ ամենաշնորհալի բնավորությունների վրա: «Զգուշացե՛ք և պահեցե՛ք ձեզ…»: Նրանց ընթացքը՝ Իսրայելի բանակներն անեծքի տակ դնելու միջոցով իրենց իսկ զենքերի հաջողությունն ապահովելու, մեզ համար տարօրինակ է թվում: Սակայն Արևելքում դա այդպես չէ: Նույնիսկ այսօր արևելյան հեթանոս ժողովուրդներն իրենց պատերազմներում միշտ ունենում են կախարդներ, որպեսզի նրանք անիծեն թշնամիներին և մրմնջան կախարդական խոսքեր ոսոխի կործանման համար: Երբեմն նրանք գաղտնի կերպով թշնամական զորքերի մեջ են փոխանցում զորավոր հմայք՝ նրանց կործանումն ապահովելու համար:

Բոլոր ժողովուրդների մեջ հին ժամանակներից տարածված է այն կարծիքը, թե մարդկանց անեծքներն ու օրհնությունները, կախարդական խոսքերն ու նվիրումները, որոնք համարվում էին բարձրագույն հոգով ներշնչված՝ լինի բարու թե չարի կողմից, ունեն ազդեցություն ոչ միայն անհատների, այլև ամբողջ ազգերի, տարածաշրջանների և նույնիսկ անասունների ու դաշտերի բերքի վրա: Հաճախ նրանք ուժեղ կախարդանքներով փորձում էին կանչել թշնամիների քաղաքների պահապան աստվածներին՝ կարծելով, թե դրանով կզրկեն նրանց գլխավոր պաշտպանությունից: Այդ պատճառով բազմաթիվ քաղաքների իսկական անունները պահվում էին որպես պետական գաղտնիք, որ թշնամին չկարողանա դրանք օգտագործել իր աղոթքներում կամ կանչերում:

Այս գիտելիքը իրականությո՞ւն էր, թե՞ պարզապես երևակայություն: Եթե պատմությունն ընդունենք իր պարզ իմաստով (իսկ Սուրբ Գրքի պատմական հատվածները պետք է հենց այդպես ընկալվեն), ապա կասկած չի մնում, որ Բաղաամն իսկապես ուներ այդ գիտելիքը: Նա ոչ միայն որոշ ճշմարտություններ գիտեր, այլև դրանք պահում էր անարդարությամբ, և Աստված, Իր բարձր նպատակներին ենթարկելով, իրապես հաղորդակցվում էր նրա հետ: Այլ բացատրությունները, որքան էլ խելացի թվան, աղավաղում են ամբողջ պատմությունը և ստիպում անտեսել այն իրական փաստերը, որոնք փորձում են մեղմացնել: ↪ *էջ 8*

Բաբելոնի աշտարակը և հարակից հարցեր

↩ *էջ 3, 5*

Ուստի ենթադրելի է, որ աշտարակի կառուցումը եթե ոչ ամբողջովին, ապա մասնակիորեն ավարտին էր հասցված:

Բաբելոնի աշտարակի բարձրության չափի մասին: Ծննդոց գիրքը չի նշում աշտարակի բարձրությունը. «մինչև երկինք հասնող գագաթ» (Ծննդ. 11:4) արտահայտությունը տպավորիչ բարձրության համար կիրառվող չափազանցություն է, այլ ոչ թե ամբարտավանությունը մատնանշող ձևակերպում: Պարականոններից Հոբելյանների գրքի 10:21-ում աշտարակի բարձրությունը նշվում է 5,433 կանգուն և 2 արմավենու չափ, որը մոտ երեք անգամ գերազանցում է Բուրջ Խալիֆայի բարձրությունը: Ի դեպ, Հոբելյանների գիրքը պարունակում է Աշտարակի մասին ամենամանրամասն պատմություններից մեկը: Ահա ամբողջական նկարագրությունը. «Եվ նրանք սկսեցին կառուցել, և չորրորդ շաբաթում նրանք կրակով աղյուս պատրաստեցին, և աղյուսները ծառայեցին որպես քար, իսկ կավը, որով դրանք ամրացրին, ասֆալտ էր, որը դուրս էր գալիս ծովից և Սինաար երկրի ջրի աղբյուրներից: Եվ նրանք կառուցեցին այն: Քառասուներեք տարի նրանք կառուցեցին այն: Դրա լայնությունը 203 աղյուս էր, իսկ [աղյուսի] բարձրությունը՝ մեկի երրորդը: Դրա բարձրությունը կազմում էր 5433 կանգուն և 2 արմավենու ճյուղ, և [մեկ պատի երկարությունը] տասներեք ստադիոն էր [և մյուս երեսում ստադիոնը]» (Հոբելյաններ 10:20–21):

Բարուքի երրորդ ապոկալիպսիսում նշվում է, որ «կռվի աշտարակը» հասել է 463 կանգուն (211,8 մ, 695 ոտնաչափ) բարձրության, որն ավելի բարձր է, քան մարդկության պատմության մեջ ցանկացած կառույց՝ մինչև 1889 թ. Էյֆելյան աշտարակի կառուցումը (բարձրությունը 324 մ, 1,060 ոտնաչափ): 6-րդ դարի Տուր քաղաքի եպիսկոպոս և ֆրանկների պատմիչ Գրիգոր Տուրացին, իր նշանավոր պատմությունը գրելով մոտ 594 թ., մեջբերում է ավելի վաղ շրջանի պատմիչ Օրոսիոսին (մոտ 417 թ.), որն ասել է, թե աշտարակը «տեղադրված էր քառանկյունի ձևով շատ հարթ հարթության վրա: Դրա պատը, որ կառուցված է եղել թրծված աղյուսից և ցեմենտապատված խեժով», ուներ 50 կանգուն լայնություն, 200 կանգուն երկարություն (23x91,5 մ, 75x300 ոտնաչափ) և 470 ստադ (82,72 կմ, 51,40 մղոն) շրջագիծ: Ստադը հին հունական երկարության միավոր էր, որը հիմնված էր այդ ժամանակվա տիպիկ մարզադաշտի շրջագծի վրա, որ կազմում էր մոտ 176 մետր (577 ոտնաչափ): Նկարագրությունը շարունակվում է. «Յուրաքանչյուր կողմում տեղադրված էր քսանհինգ դարպաս, որոնք ընդհանուր առմամբ կազմում են հարյուր: Այս դարպասների դռները, որոնք զարմանալի չափերի են, ձուլված են բրոնզից»: Նույն պատմաբանը ներկայացնում է այս քաղաքի մասին շատ այլ պատմություններ և ամփոփում. «Չնայած նրա շենքի փառքը այդպիսին էր, այն, այնուամենայնիվ, ավածվեց և ավերվեց»:

Բաբելոնի աշտարակի բարձրության մասին միջնադարյան պատմություններում ու լեգենդներում առկա են վերոնշյալ թվաբանական հաշվարկներին անհամապատասխանող տվյալներ, որոնց հավաստիության ու փաստարկվածության իսպառ բացակայությամբ պայմանավորված՝ բավարարվենք այսքանով:

«Բաբելոն» բառի ծագման շուրջ: «Բաբելոնի աշտարակ» արտահայտությունը չկա ո՛չ Ծննդոց գրքում, ո՛չ էլ աստվածաշնչյան այլ գրքում. գործածված են «քաղաք և աշտարակ» կամ պարզապես «քաղաք» եզրույթները: *Բաբելոն* անվան եբրայերեն ծագումն անորոշ է: Քաղաքի բնիկ աքքադական անվանումը Բաբ-իլիմ էր, որը նշանակում է «Աստծո դարպաս»: Սակայն սովորաբար ենթադրվում է, որ այդ ձևը և մեկնաբանությունը ծագում են աքքադական ժողովրդական ստուգաբանությունից, որը կիրառվել է անվան ավելի վաղ ձևի՝ Բաբիլլայի համար և անհայտ իմաստ ունի (հավանաբար, սեմական ծագում չունի):

Ծննդոց 11-ում նշված պատմության համաձայն՝ քաղաքը *Բաբելոն* անունն ստացել է եբրայերեն *բալալ* բայից, որը նշանակում է *խառնաշփոթ* կամ *շփոթեցնել*՝ այն բանից հետո, երբ Յահվեն աղավաղել է մարդկության ընդհանուր լեզուն: Այս երկու անունների միջև առկա է բառախաղ՝ *Բաբելոն* և *խառնաշփոթ* եբրայերեն եզրույթների նմանատիպ արտասանության պատճառով:

Բաբելոնի աշտարակի պատմության իմաստաբանությունը: Բաբելոնի աշտարակի պատմությունը դասվում է էթիոլոգիական (տեսություն պատճառների և պատճառականության մասին) առասպելների շարքում, որը նախատեսված է բացատրելու որևէ սովորույթի, ծեսի, աշխարհագրական առանձնահատկության, անվան կամ այլ երևույթի ծագումը, այստեղ՝ լեզուների բազմության ծագումը: Բաբելոնի աշտարակի կառուցումից առաջացած լեզուների խառնաշփոթը (լատիներեն՝ confusio linguarum) բացատրում է մարդկային լեզուների առանձնացումը. Աստված մտահոգված էր, որ մարդիկ հայհոյել էին՝ կառուցելով աշտարակը՝ երկրորդ ջրհեղեղից խուսափելու համար, և այդ պատճառով Աստված ստեղծեց բազմաթիվ լեզուներ, ինչը մարդկությանը զրկեց միմյանց հասկանալու հնարավորությունից:

Այս իրադարձությունից առաջ ասվում է, որ մարդկությունը խոսում էր մեկ լեզվով՝ չնայած նախորդող՝ Ծննդոց 10:5-ում նշվում է, որ Հաբեթի, Գոմերի և Հավանի սերունդները ցրվել են «ամեն մեկն իր լեզվով»: Օգոստինոս Երանելին, բացատրելով այս ակնհայտ հակասությունը, պնդում է, որ պատմությունը «առանց այն հիշատակելու, վերադառնում է պատմելու, թե ինչպես է պատահել, որ բոլոր մարդկանց համար ընդհանուր լեզուն բաժանվել է բազմաթիվ լեզուների»: Ժամանակակից գիտական հետազոտողները պնդում են, որ երկու գլուխները գրվել են տարբեր աղբյուրներից ազդված. առաջինը՝ քահանայական, իսկ երկրորդը՝ յավիստական:

Նարեկ սրկ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Օֆելյա ԳԱՍՊԱՐՅԱՆ

Ասված կանչում է Աբրահամին

↩ էջ 2

Վերջինս 70 տարեկանում ծնեց Աբրահամին, Նաքովրին և Առանին: Առանը Ղովտի հայրն էր և մեռավ իր հորից՝ Թարայից առաջ այն երկրում, որտեղ ծնվել էր՝ քաղդեացիների աշխարհում (Ուր): Տարիներ շարունակ ժամանակակից գիտնականներին այս անունով հայտնի միակ քաղաքը Եփրատի հարավային հատվածում գտնվող շումերական Ուրն էր: Սակայն որոշակի շփոթության տեղիք էր տալիս այն հանգամանքը, որ հարավային այս քաղաքը կոչվում էր քաղդեացիների Ուր, չնայած որ այդ ժամանակ վերջիններս հիմնականում բնակվում էին Միջագետքի հյուսիսային մասում: Հետագայում հայտնաբերված գրավոր վկայությունների հիման վրա առաջարկվեցին նոր վարկածներ, որոնցից մեկն աստվածաշնչյան Ուրը նույնացնում էր հյուսիսային մի փոքրիկ քաղաքի հետ՝ Խառանից (որտեղ Թարան բերել էր իր ընտանիքը) ոչ հեռու գտնվող: Տրամաբանական է նաև, որ քաղաքը կոչվել է քաղդեացիների Ուր՝ հարավում գտնվող հայտնի Ուրից այն տարբերելու նպատակով: Այսուհանդերձ, հարցի շուրջ գիտական վերջնական համաձայնություն դեռևս չկա:

Ինչ վերաբերում է Թարայի որդու՝ Առանի մահվանը, ապա այդ առնչությամբ հայտնի միդրաշներից մեկը տալիս է հետևյալ մեկնաբանությունը: Աբրահամը, պայքարելով կռապաշտության դեմ, կոտրում է իր հոր՝ Թարայի կուռքերը: Վերջինս այդ մասին հայտնում է Նեբրովթին, որն էլ Աբրահամին նետում է կրակի հնոցը: Առանն այս իրավիճակում չի կողմնորոշվում, թե ում աջակցի, և սպասում է գործողությունների զարգացմանը: Երբ Աբրահամը հրաշքով փրկվում է, Առանը հայտարարում է, որ ինքն Աբրահամի կողմն է, ինչի պատճառով նրան ևս նետում են հնոցը. վերջինս, սակայն, չի կարողանում փրկվել: Դրա համար միդրաշն ասում է, որ Առանը «մեռավ իր հոր պատճառով», քանի որ հիշյալ իրադարձությունների շղթան սկսվել էր Թարայի «մատնությամբ»: Այստեղ բացատրվում է նաև քաղդեացիների Ուր (եբրայերեն՝ Ուր-Քասդիմ) անվանումը: Միդրաշն «ուր» բառը կապում է «կրակ» կամ «բոց» բառերի իմաստի հետ՝ դիտարկելով այն որպես «քաղդեացիների կրակե հնոց»: Միջնադարյան մեկնաբանություններից մեկն էլ առաջարկում է լեզվաբանական բացատրություն, այն է՝ «ուր»-ը նշանակում է «խոր փոս», «ձոր» կամ «հովիտ», ոչ թե «կրակ»: Այս դեպքում, սակայն, «Ուր-Քասդիմ»-ը պարզապես դառնում է տեղանուն և ոչ հիշատակություն կրակի հնոցի մասին: Այս ամենից հետո Աբրահամն ու Նաքովրն իրենց համար կանայք են առնում (Աբրահամի կնոջ անունը՝ Սարա, Նաքովրինը՝ Մեղքա: Վերջինս Առանի դուստրն էր):

Եվ ահա բնագրում պատմվում է, որ Թարան որոշում է հեռանալ քաղդեացիների երկրից և գնալ Քանան՝ իր հետ վերցնելով Աբրահամին, Սարային և Ղովտին՝ բացառությամբ իր որդի Նաքովրի (ըստ եբրայական բնագրի): Պետք է նշել, որ Խառանը գտնվում էր հարավային Ուրից 550 մղոն հյուսիս-արևմուտք: Այն ներկայիս Թուրքիայի տարածքում է՝ սիրիա-թուրքական սահմանին մոտ: Խառանը հիշատակվում է Մարի քաղաքի՝ Ք. ա. 18-րդ դարի աղբյուրներում որպես Հյուսիսային Միջագետքի նշանավոր վայր: Այն ամորհացիների գործունեության կարևոր կենտրոններից էր և գտնվում էր խոշոր առևտրական ճանապարհների խաչմերուկում: Այստեղ էր նաև լուսնի աստծո՝ Սինի տաճարը: Հետաքրքրական է, որ Թարան չի հասնում քանանացիների երկիր, այլ մահանում է հենց Խառանում:

Հավանական կարծիքներից մեկը, թե ինչո՞ւ նա իր հետ չվերցրեց Նաքովրին, հետևյալն է. վերջինս ավելի վաղ էր մեկնել Խառան՝ ընտանիքի համար ճանապարհ նախապատրաստելու նպատակով: Հետագայում Ծննդոց 24:10 համարում Աբրահամի ծառան Իսահակի ամուսնության նպատակով պետք է գնար Միջագետք՝ Նաքովրի քաղաք, որն էլ սովորաբար նույնացվում է Խառանի հետ: Շատ հետազոտողներ կարծում են, որ Նաքովրի քաղաքը կարող է նշանակել Խառանի շրջանի մի գյուղ կամ քաղաք, գուցե պարզապես՝ Նաքովրի ընտանիքի բնակեցրած տարածք, այլ ոչ պարտադիր մեկ հստակ վայր:

Աստված կանչում է Աբրահամին

Ինչպես նախորդիվ նշվեց, իսրայելական ազգի պատմության ձևավորումն սկիզբ է առնում Ծննդոց 12-րդ գլխից: Համաձայն որոշ միդրաշների՝ Աբրահամն իր գործունեությունն սկսում է միաստվածություն քարոզելով, և ահա այդ ամենի համապատկերում Աստված հայտնվում է նրան՝ ասելով. «Ելի՛ր դու քո երկրից, քո ազգականներից ու քո հոր տնից և գնա՛ այն երկիրը, որ ցույց կտամ քեզ» (Ծննդ. 12:1): «Ելի՛ր» հրամայական արտահայտությանը եբրայական բնագրում համապատասխանում է «լեխ լեխա» կապակցությունը, որը բառացի թարգմանությամբ նշանակում է «գնա՛ քեզ համար», «գնա՛ քո օգտի համար», «գնա՛ հանուն քեզ»: Ահա այս խոսքերին անսալու արդյունքը լինելու էր այն, որ Աբրահամը հետագայում զավակ պիտի ունենար, դառնար ազգերի հայր և այդպիսով ձեռք բերեր մեծ անուն ու հեղինակություն: Թեև Աբրահամը ֆիզիկապես հեռացել էր Ուրից, այդուհանդերձ շարունակում էր գտնվել իր ընտանիքի և հայրական միջավայրի ազդեցության ներքո, այդ պատճառով էլ ասվում է՝ «Ելի՛ր քո հոր տնից»: Հետաքրքրական է նաև, որ Աստված անմիջապես չի մատնանշում այն տարածքը, որտեղ պետք է գնա Աբրահամը: Հրեա րաբբիների կարծիքով՝ այս կերպ Աբրահամից պահանջվում է ունենալ առավել մեծ հավատ ու վստահություն Աստծո և նրա կատարած գործերի հանդեպ: Տիրոջ պատվիրանները մշտապես ուղղված են մարդուն՝ բացահայտելու իրական բարիքը, և որ ամենակարևորն է այս դեպքում, Աստված չի լքելու Աբրահամին և նրան ցույց է տալու ճշմարիտ ճանապարհը:

Հաջորդիվ Տերը խոստանում է. «Քեզ մեծ ազգ պիտի դարձնեմ, պիտի օրհնեմ քեզ, փառավորեմ քո անունը, և դու օրհնյալ պիտի լինես» (Ծննդ. 12:2): Ինչպես գիտենք, երկարաժամկետ ճանապարհորդություններ երբեմն մարդկանց համար ունենում էին որոշակի ծանր հետևանքներ. դրանք վնասում էին իրենց տոհմի շարունակմանը, հարստությանը և տվյալ մարդու հեղինակությանը, ուստի Աբրահամն ամենից շատ այս երեք օրհնությունների կարիքն ուներ: Եվ Տերը նրան խոստացավ տալ թե՛ որդիներ, թե՛ հարստություն և թե՛ մեծ անուն: Աբրահամի համար այս դեպքում կարևոր էր ոչ թե խոստացված փառքը, այլ այն, որ մարդիկ հասկանան ու ընկալեն Նրա պատգամները: Աբրահամն այս կերպ դառնում է Աստծո օրհնության գլխավոր կրողը, այն անձը, որի միջոցով աշխարհը պետք է ճանաչի Աստծուն և ստանա Նրա օրհնությունը:

Միդրաշներից մեկի համաձայն՝ եբրայերեն «բրախա» (օրհնություն) բառը կապված է «բրեխա» (ավազան, որ լցվում է տարբեր աղբյուրներից եկող ջրերով) եզրույթի հետ: Ինչպես ջրով լի ավազանը սրբում է մարդուն ծիսական անմաքրությունից, այնպես էլ աստվածաճանաչողությունն ուղղակիորեն մաքրում և փոխում է մարդկային կյանքը: Սա նշանակում է, որ Աբրահամն ու նրա սերունդները կոչված են դառնալու Աստծո մասին գիտելիքի և բարոյական լույսի աղբյուր ողջ մարդկության համար:

Հրեական ավանդության համաձայն՝ Աբրահամի առաքելությունը միայն սեփական ժողովրդի սկզբնավորումը չէր, այլ Աստծո և Նրա մասին գիտելիքի տարածումը բոլոր ազգերի մեջ. «Աբրահամը մեծ և բազմանդամ ազգ է լինելու անշուշտ, և նրանով կօրհնվեն երկրի բոլոր ազգերը. որովհետև գիտեի, որ նա իր որդիներին ու իր հետնորդներին պատվիրելու է Տիրոջ ճանապարհով ընթանալ և արդարությունն ու իրավունքը գործել: Եվ Տերը՝ Աստված, Աբրահամին կտա այն ամենը, ինչ խոստացել է» (Ծննդ. 18:18—19):

Հողագործական մի հետաքրքիր միջոց կա. որևէ բուսատեսակի բազմացման նպատակով թեքում են դրա ճյուղերից մեկը և այն թաղում հողի մեջ: Բույսը նոր արմատներ է տալիս և հետագայում առանձնանում: Այս գործընթացը հայտնի է շերտավորում կամ ճյուղային արմատակալում անվանումներով: Եբրայերեն «ավրախա» բառով է բնութագրվում այս գործողությունը: Աբրահամը պիտի դառնա մեծ ազգ և միավորի ողջ մարդկությանը: Խորհրդանշական կերպով նա դառնալու է այն հողը, որտեղ ազգերը նոր պտուղներ պիտի տան: Այս ճանապարհին, սակայն, Աբրահամը «դատապարտված» է միայնակ քայլելու Աստծո հետ, որպեսզի չձուլվի շրջակա հեթանոս միջավայրին և չշեղվի իր հիմնական առաքելությունից: Պատկերավոր կարելի է ասել, որ տեղի է ունենում երկրորդ արարչագործություն՝ Աբրահամի սերունդներից մեծ ազգի ստեղծում, որը կարող է ազգ դառնալ միայն աքսորի ու չարչարանքի ճանապարհ անցնելով:

«Պիտի օրհնեմ քեզ օրհնողներին, քեզ անիծողներին պիտի անիծեմ: Քեզնով պիտի օրհնվեն աշխարհի բոլոր ժողովուրդները» (Ծննդ. 12:3): Բոլոր նրանք, ովքեր կհետևեն Աբրահամին, Տիրոջից ուղղակիորեն օրհնություն ու բարիք կստանան: Եվ հակառակը՝ բոլոր նրանք, ովքեր կփորձեն խոչընդոտել, անարգել կամ ցսեմացնել Աբրահամին, կարժանանան Աստծո անեծքին: Բնականաբար, այս մեկնաբանությամբ Աբրահամը չի դիտարկվում իբրև պարզ անհատականություն. նրա միջոցով ներկայացվում են որոշ կարևորագույն գաղափարներ, ինչպիսիք են միաստվածությունը, արդարությունը, հավատքը, բարոյական պատասխանատվությունը և մարդկային արժանապատվությունը: Ուստի՝ երբ խոսվում է Աբրահամի նկատմամբ այս կամ այն վերաբերմունքի մասին, ապա նախևառաջ պետք է հասկանալ, որ խոսքն այս դեպքում տվյալ արժեքների նկատմամբ որևէ մեկի ցուցաբերած վարվելակերպի մասին է: Իսրայելը պետք է դառնա «լույս՝ ազգերի համար» (Եսայի 42:6), և հրեա ժողովրդի միջոցով բոլոր մարդիկ պետք է ճանաչեն միակ Աստծուն, սիրեն արդարության ուղիները՝ այդ կերպ բացահայտելով օրհնությունների ամենամեծ գանձարանը, որ ստացավ նաև Աբրահամը:

Այսպիսով՝ Աբրահամի կանչը ոչ միայն մեկ մարդու «գաղթի», այլև նոր մարդկության սկզբնավորման պատմությունն է: Բաբելոնյան աշտարակի մոտ մարդիկ փորձեցին համախմբվել առանց Աստծու, իսկ Աբրահամի միջոցով Տերն սկսեց միավորել մարդկությանն Իր շուրջը: Ծննդոց 12-րդ գլուխը ոչ միայն Աբրահամի կենսագրության մեկնարկի, այլև մարդկության՝ դեպի հոգևոր ուղղություն փոխադրվելու սկիզբի մասին է:

Գագիկ սրկ. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Արմենակ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Ճնորհ՝ առանց փրկության. Աստծո կամքը և մարդու երկմտանքը

↩ էջ 4, 7

Բաղաամի խոր հետաքրքրությունն Իսրայելի գործերի հանդեպ և նրա ծանոթությունը նրանց պատմությանը, ներկա վիճակին ու ապագա հույսերին ակնհայտ են նրա մարգարեական խոսքում, որը նա վերջապես ստիպված էր արտասանել: Թե ինչպես նա ձեռք բերեց այդ գիտելիքը, և թե ինչու այն չունեցավ հոգևոր օգտակարություն նրա համար, առաջին հայացքից բարդ հարց է թվում, սակայն իրականում այդքան էլ դժվար չէ:

Հնարավոր է, որ նա որոշ գիտելիքներ ժառանգած լիներ Միջագետքում պահպանված նահապետական կրոնի մնացորդներից, որոնք գոյություն ունեին դեռ Հակոբի օրերից: Սակայն առավել ամբողջական բացատրությունն այն է, որ այդ գիտելիքի հիմնական մասը նա ստացել էր հենց Իսրայելից: Դա միանգամայն բնական է. Իսրայելի քառասնամյա անապատային շրջագայությունը չէր կարող չառաջացնել լայն խոսակցություններ: Բաղաամը՝ որպես իր մասնագիտությանը լիովին նվիրված մարդ, անշուշտ, ուշադրությամբ հետևում էր Եգիպտոսից դուրս եկած ժողովրդի մասին պատմություններին՝ նրանց ծագման և հրաշագործ փրկության վերաբերյալ: Նա լսած կլիներ Կարմիր ծովի բաժանման և պղնձե օձի հրաշքի մասին:

Եվ ինչպես Սիմոն մոգի դեպքում, Բաղաամի առջև բացվում էր փառքի և շահի նոր ճանապարհ, ինչը գրավիչ էր նրա մեղավոր հակումների համար: Այդ ժամանակ նա, հավանաբար, սկսեց ընդունել Յահվեին՝ որպես իր Աստծու, և իրեն կոչել Նրա մարգարե: Սակայն չի կարելի բացառել նաև, որ այս ամենում առկա էր որոշակի բարձր զգացում՝ իր հոգևոր դատարկության գիտակցությունը, որը նրան մղում էր փնտրելու Աստծուն: Բացի այդ՝ պետք է ընդունել, որ Տերն Իր նպատակների իրականացման համար երբեմն իսկապես հատուկ հայտնություններ էր տալիս նրան:

Սա խաբուսիկ և վտանգավոր վիճակ է նույնիսկ հավատավոր մարդկանց համար: Երբ սատանան չի կարողանում մարդուն պահել կոպիտ մեղքերի մեջ, փոխում է իր կերպարը. թույլ է տալիս ատել հարբեցողությունը, անառակությունն ու անկարգությունը, սակայն ներմուծում է մեկ այլ ծայրահեղություն՝ աշխարհիկ հոգսեր, անհանգիստ մտահոգություններ և ագահ ցանկություններ՝ ունենալու, պահելու և կորցնելու մշտական վախով: Սա նուրբ և դժվարնկատելի մեղք է և հենց այդ պատճառով էլ դժվար է բուժվում, քանի որ մարդիկ հաճախ չեն էլ գիտակցում այն:

Բաղաամի կերպարն այստեղ զգուշացնող օրինակ է: Նա մարդ էր, որ ճանաչում էր Աստծուն, լսում էր Նրա ձայնը և նույնիսկ ուներ մարգարեական շնորհ: Սակայն նրա սիրտը բաժանված էր: Նա գիտեր ճշմարտությունը, բայց չէր ապրում դրանով: Նա լսում էր Աստծուն, բայց միաժամանակ առաջնորդվում էր իր շահով՝ ցույց տալով ագահության վտանգը: Նա չէր կարող հրաժարվել այն հնարավոր շահից, որ ներկայացվում էր իրեն: Եվ հենց այստեղ սկսվեց նրա անկումը: Երբ հոգին պիտի ընտրի Աստծուն կամ շահը, միշտ հաղթում է այն, ինչին մարդն ավելի շատ է հակված:

Այս պատմությունը մեզ հորդորում է զգուշանալ երկու մեծ վտանգից. առաջինը՝ հոգևոր գիտելիք ունենալ՝ առանց հոգևոր հնազանդության, և երկրորդը՝ թույլ տալ, որ աշխարհիկ ցանկությունները ղեկավարեն մեր սիրտը: Աստված չի փնտրում միայն մարդկանց, որոնք Իրեն ճանաչում են խոսքով, այլև նրանց, որոնք Իրեն հնազանդվում են սրտով: Բավարար չէ լսել Աստծու ձայնը, պետք է նաև հետևել այդ ձայնին: Այսօր էլ նույն պայքարը շարունակվում է յուրաքանչյուր մարդու ներսում: Կա Աստծու ձայնը, որ կանչում է դեպի ճշմարտություն, և կա աշխարհի ձայնը, որը խոստանում է շահ, հարմարություն և հեշտություն: Իսկ մարդու հոգևոր վիճակը որոշվում է նրանով, թե ո՛ր ձայնին է նա հնազանդվում: Ուստի՝ Բաղաամի պատմությունը մեզ համար մնում է կենդանի նախազգուշացում. մեծ շնորհները, առանց մաքուր սրտի, կարող են դառնալ վտանգ, և Աստծուն ճանաչելը դեռ չի նշանակում Աստծուն պատկանել:

Ալբերտ սրկ. ՍԱՀԱԿՅԱՆ
Արմեն ՍԱՀԱԿՅԱՆ

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝
Նարինե Հովհաննիսյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝ qristonyahayastan1@gmail.com
qristhay@etchmiadzin.am
web կայք՝
krishayas.wordpress.com
etchmiadzinlibrary.am/en/kristonya-hayastan
Ստոր. տպագր. 1.07.2026 թ.
Տպաքանակը՝ 915